(1,1) -1- № 662 (12).indd 8/25/2026 7:54:08 PM

Չորեքշաբթի
26 օգոստոսի 2026թ.
№ 12 (662)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԻՔԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468
26012 >
9 771829 346006

Արդյո՞ք նոր ԱԺ-ն կդառնա երկրի քաղաքական

Լուրեր

- Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարել է TRIPP նախագծի շրջանակներում Հայաստանի տարածքով էլեկտրահաղորդման գծի անցկացման ծրագրի նախապատրաստման մասին: Ինչպես հաղորդում են ադրբեջանական լրատվամիջոցները, Ադրբեջանի նախագահը հայտարարել է, որ ադրբեջանցի մասնագետները արդեն իսկ վերլուծել ու որոշել են այն վայրերը, որտեղ կարող են տեղադրվել էլեկտրահաղորդման գծերի հենասյուները:
  Ալիևը հույս է հայտնել, որ «Հայաստանն այդ գործընթացը չի ձգձգի, քանի որ դա ձեռնտու է նաև հենց Հայաստանի համար»:
  Հարց՝ Ադրբեջա՞նն է որոշում, թե Մեղրու տարածքում որտեղ կարող են տեղադրվել էլեկտրահաղորդման գծերի հենասյուները:

- Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը նշել է, որ ներկայումս Հայաստանի էներգետիկայի հիմնական աղբյուրը ատոմակայանն է, սակայն, ըստ նրա, կայանը հնացած է և վտանգ է ներկայացնում տարածաշրջանի համար: Ալիևի խոսքով՝ ատոմակայանի շահագործման ժամկետը հնարավոր չէ անվերջ երկարաձգել, և վաղ թե ուշ այն պետք է փակվի: Այդ դեպքում, ըստ նախագահի, Հայաստանը կարող է բախվել լուրջ էներգետիկ ճգնաժամի, ուստի էլեկտրամատակարարման լրացուցիչ աղբյուր ունենալը ձեռնտու կլիներ Հայաստանին:

- **«2020 թվականի Ղարաբաղյան պատերազմի ավարտի կապակցությամբ Ադրբեջանի նախագահի, Ռուսաստանի նախագահի և Հայաստանի վարչապետի կողմից ստորագրվեց եռանկոմ հայտարարություն:**

(1,2) -1- № 662 (12).indd 8/25/2026 7:54:08 PM

Զրույցի գլխավոր թեմա է դարձել Բարեգործական կյանքի էպիկենտրոն և կլինի բարեվարքության-բարեկրթության օրինակ, եթե դրսում անհանդուրժողականություն ու ատելություն է թևածում

Իրանը դեմ է TRIPP-ին...

Վերջին օրերին հայկական մամուլում և փորձագիտական շրջանակներում քննարկվում էր Իրանի առաջնորդ Մոջթաբա Խամենեիի օգնական և զինված ուժերի հարցերով ավագ խորհրդական, գեներալ-մայոր Յահյա Ռահիմ Սաֆավիի հայտարարությունը՝ TRIPP նախագծի վերաբերյալ:

Իրանի իշխանությունների ներկայացուցիչը, ըստ էության, հայկական կողմին մեղադրել էր TRIPP-ի նկատմամբ Իրանի դիրքորոշումը կեղծելու, այսինքն՝ ստելու մեջ: Բանն այն է, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ, ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը հայտնել էր, թե Հայաստանն ու Իրանը իբր նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերել ամերիկյան TRIPP նախագծի շուրջ: Հերքելով Խանդանյանի հայտարարությունները՝ գեներալ Սաֆավին բառացիորեն ասել էր. **«Մենք Հայաստանի հետ ոչ մի նախնական պայմանավորվածություն TRIPP-ի վերաբերյալ չունենք: Այդ հարցով չունենք ոչ մի իրական փոխըմբռնում, ոչ էլ հատման ընդհանուր կետ: Մեկնաբանությունները և հստակ կերպով Հայաստանի ուշադրությանն ենք ներկայացրել մեր կարմիր գծերը: Հետևաբար, Հայաստանի խորհրդարանի պատգամավորի հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը: Եթե մենք դեմ ենք ԱՄՆ-ի ներկայությանը Պարսից ծոցում, ապա ինչո՞ւ պետք է աջակցենք նրանց ներկայությանը Հարավային Կովկասում: Մենք տարածաշրջանը և մեր սահմանների անվտանգությունը դիտարկում ենք որպես մեկ միասնական ամբողջություն: Ուստի այս նախագիծն իր ներկայիս ձևաչափով սպառնալիք է ներկայացնում Իրանի համար:**

Մենք շարունակում ենք բանակցությունները Հայաստանի հետ: Եթե այնտեղ անվտանգության պատասխանատվությունը դրվի ամերիկյան զինված ուժերի վրա, ապա Իրանը պահպանում է պատասխան գործողությունների իրավունքը և համապատասխան միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը: Ավելի վարչապետի կողմից ստորագրվեց եռակողմ հայտարարություն: Իրականում Հայաստանի համար դա կապիտուլյացիայի ակտ էր, քանի որ Հայաստանը հանձնվեց: Աղդամի, Քելբաջարի և Լաչինի շրջանները մեզ վերադարձվեցին առանց որևէ կրակոցի: Բնականաբար, Հայաստանը դա կամավոր չի արել, մենք նրան հարկադրեցինք: Եթե պատերազմի պայմաններում դու ինչ-որ մեկին ստիպում ես ինչ-որ բան անել, դա նշանակում է, որ այդ կողմը կապիտուլյացիայի է ենթարկվել: Այսինքն՝ այս եզրույթի մեջ պետք չէ որևէ նվաստացուցիչ կամ վիրավորական իմաստ փնտրել: Դա պարզապես իրականություն է: Նոյեմբերի 9-ին Ռուսաստանի նախագահի միջնորդությամբ տեղի էին ունենում եռակողմ բանակցություններ: Ես կտրականապես պնդում էի, որ ստորագրվող հայտարարության մեջ անպայման պետք է արտացոլվի Ադրբեջանի հիմնական մասը Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ կապող միջանցքի հարցը: Հայկական կողմը չէր ցանկանում համաձայնել դրան: Սակայն այն այնքան էլ շատ այլընտրանքներ չուներ: Եթե պատերազմը շարունակվեր, իհարկե, մենք նույնպես կորուստներ կունենայինք, սակայն Հայաստանի կորուստները շատ ավելի մեծ կլինեին: Քանի որ նրանց զորքերը, կարելի է ասել, շրջափակման մեջ էին, և փաստացի հնարավոր էր նրանց լիակատար ոչնչացումը: Ուստի, նույնիսկ դա չցանկանալով, Հայաստանը համաձայնություն տվեց, և այդ հայտարարությունը բոլորին հայտնի է. այնտեղ կա համապատասխան հատուկ կետ», – նշել է Իլհամ Ալիևը:

Շարունակությունը՝ էջ 3

(1,1) -2- № 662 (12).indd 8/25/2026 7:54:16 PM

Ադրբեջանի հետ հաստատված խաղաղության պահպանումը, ամրապնդումը և ինստիտուցիոնալացումը կառավարության համար առաջնային օրակարգ է: Այս ուղղությամբ առաջիկա կարևոր անելիքներից մեկը գետնի վրա TRIPP նախագծի իրագործումն է, որը բխում է Կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախագծից, և որը 2025 թվականի օգոստոսի 8-ի Վաշինգտոնի խաղաղության գագաթնաժողովի կարևոր գործնական արդյունքներից մեկն է:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը ԱԺ-ում կառավարության 2026-2031 թթ. ծրագրի քննարկմանը (հատված)

TRIPP նախագիծը, որն իրագործվելու է Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, իրավազորության սկզբունքների հիման վրա՝ վերջ է դնելու Հայաստանի շրջափակմանը: Հայաստանի շրջափակումը, ի դեպ, հիմա արդեն մասամբ հաղթահարված է, որովհետև արևմուտք: Այդ բեռներն անխուսափելիորեն անցնելու են TRIP-ով՝ Նռնաձոր-Ագարակ երկաթուղիով:

Հասկանալի է, որ Ագարակից բեռները մտնելու են Նախիջևան և այստեղ է, որ մեզ համար ծագում է մի իրադրություն, որի կառավարումն էական նշանակություն ունի Հայաստանի համար: Իսկ այդ իրադրությունը հետևյալն է՝ խորհրդային ժամանակներում

Ընդ որում, էլի ուզում եմ կրկնել, որ երկաթուղին Հայաստանի սեփականությունն է և ընդամենը գտնվում է ռուսական երկաթուղիների կառավարման ներքո, ու մենք ոչ մի խնդիր չունենք այս փաստի հետ: Մենք մեծագույն հարգանքով ենք վերաբերվում Ռուսաստանի Դաշնությանը և նրա շահերին, բայց Հայաստանի երկաթուղին ռուսական կառավարման ներքո լինելու

ղորդման գծեր: Մեծ է հավանականությունը, որ էլեկտրահաղորդման գծերը կլինեն TRIPP–ի շրջանակներում գործարկված առաջին ենթակառուցվածքը, որովհետև նախ՝ տեխնիկապես համեմատաբար հեշտ է արագ ավարտին հասցնելը, և հետո՝ էլեկտրաէներգիայի աշխարհում աճող պահանջարկը ստիպում է ավելի մեծ ուշադրություն դարձնել տարածաշրջանից

Հայաստանի շրջափակումը, ի դեպ, որսա արդեն մասամբ հաղթահարված է, որովհետև 2025 թվականի նոյեմբերից Ադրբեջանի երկաթուղին Վրաստանի տարածքով բաց է Հայաստան ներմուծումների և Հայաստանից արտահանումների համար, իսկ Ախալքալաք-Կարս երկաթուղին, ինչպես տեղյակ եք, մայիսին բացվեց Հայաստանից արտահանումների և դեպի Հայաստան ներմուծումների համար: Այժմ նաև Թուրքիայի ճանապարհներն են Վրաստանի տարածքով բացվում Հայաստանի ավտոմեքենաների համար: TRIPP նախագիծը, սակայն, ոչ միայն Հայաստան-Ադրբեջան ուղիղ երկաթուղային կապն է բացելու, ներառյալ՝ Հայաստանի տարածքով Ադրբեջանի արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև կապը, նաև Հայաստանի հյուսիսային շրջանների երկաթուղային կապը Սյունիքի մարզի հետ Նախիջևանի տարածքով, այլև Հայաստանն ինտեգրելու է միջազգային երկաթուղային ցանցին:

Ուզում եմ ընդգծել, որ նախագծի իրագործումը բացելու է նաև երկաթուղային կապը Պարսից ծոցի և Սև ծովի միջև Իրանի, Նախիջևանի, Հայաստանի և Վրաստանի տարածքով, որը դարակազմիկ փոփոխություն է թե՛ Իրանի, թե՛ Ադրբեջանի, թե՛ Հայաստանի, թե՛ Վրաստանի համար: Հայաստանն այսպիսով երկաթուղային կապ է ստանալու Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Ուշադրություն եմ հրավիրում այն փաստի վրա, որ Պարսից ծոց-Սև ծով երկաթուղին TRIPP-ի հետ ուղիղ կապ չունի, այսինքն՝ այդ նախագծի մաս չէ, դրա վերաբացումը դառնալու է տարածաշրջանային ապաշրջափակման կարևոր հարակից արդյունքներից մեկը: Ինչ վերաբերում է բուն TRIPP-ի երկաթուղային ենթակառուցվածքներին, ակնհայտ է, որ այն անցնելու է Նռնաձոր-Ագարակ երթուղով, Հայաստանի հարավային սահմանի երկայնքով, Արաքսի ափով՝ խորհրդային ժամանակներում գոյություն ունեցած մեզ բոլորիս հայտնի երկաթուղու ծրագծով: Այդ երկաթուղին Ադրբեջանի տարածքով Հայաստանը կապելու է Ռուսաստանի և կենտրոնական Ասիայի հետ, և հասկանալի է, որ դրանով ահռելի բեռնափոխադրումներ են իրականացվելու, հատկապես արևելքից Հայաստանի ուսար: Իսկ այդ իրադրությունը հետևյալն է՝ խորհրդային ժամանակներում Նախիջևանից երկաթուղին Արարատի մարզի Երասխ բնակավայրով մտել է Հայաստան և շարունակվել է մինչև Շիրակի մարզի Ախուրիկ բնակավայր, ապա և մտել Թուրքիա: Ու մենք հիմա տեսնում ենք, որ միջազգային ներդրողները, ոգևորված լինելով TRIPP նախագծով և ներդրումներ անելու մեծ ախորժակ ունենալով, Երասխ-Ախուրիկ երկաթուղային հատվածը շրջանցելու ուղիներ են փնտրում: Փնտրում են սխեմա, որ բեռները Նռնաձոր-Ագարակ երկաթուղով Նախիջևան մտնելուց հետո դեպի արևմուտք ընթացքը շարունակեն ոչ Հայաստանի երկաթուղով, այլ շրջանցեն Հայաստանի երկաթուղին: Սա մեզ համար մեծ խնդիր է, որովհետև նման սցենարում Հայաստանը մեծ եկամուտներ, ներդրումներ, պոտենցիալ աշխատատեղեր, զարգացման հնարավորություններ է կորցնում: Իսկ ինչո՞ւ են ներդրողները, բեռնափոխադրողները, ապրանքներ վաճառողներն ու ձեռք բերողներն ուզում խուսափել Երասխ-Ախուրիկ երկաթուղուց: Մի պարզ պատճառով՝ երկաթուղու այդ հատվածը, թեև Հայաստանի լիարժեք սեփականությունն է, գտնվում է ռուսական երկաթուղու կառավարման ներքո: Իսկ Ռուսաստանի և արևմուտքի բարդ հարաբերությունները, Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները միջազգային ներդրողներին, բեռնափոխադրողներին և առևտրի մասնակիցներին ստիպում են խուսափել, դա ռիսկ համարել և ռիսկի չդիմել: Այսինքն՝ նրանք համարում են, որ աշխատելով նման ենթակառուցվածքների հետ, ռիսկի են դիմում, մանավանդ, եթե հաշվի առնենք TRIPP-ով բեռնափոխադրումների ամենախոշոր հաճախորդները լինելու են այն երկրները, որոնք պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի դեմ:

Հասկանալի է, որ Հայաստանը ոչ մի առնչություն և ազդեցություն չունի Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հարցում: Հասկանալի է, որ մենք խնդիր չունենք նաև այն փաստի հետ, որ Հայաստանի երկաթուղին գտնվում է ռուսական երկաթուղիների կառավարման ներքո: Սա մեզ համար որևէ խնդիր չի եղել, և մենք երբեք այս թեմային չենք անդրադարձել: Սրա շառերիս, բայց Հայաստանի երկաթուղիս ռուսական կառավարման ներքո լինելու պատճառով՝ հիմա մենք կանգնած ենք Հայաստանը միջազգային երկաթուղային ցանցին ինտեգրելու պատմական այս հնարավորությունը կորցնելու վտանգի առաջ:

Մենք չենք կարող մեզ թույլ տալ կորցնել այդ պատմական հնարավորությունը: Այս է պատճառը, որ Ռուսաստանի Դաշնության մեր գործընկերներին խնդրում ենք ճկունություն ցուցաբերել և կոնցեսիայի իրավունքը վաճառել Հայաստանի և Ռուսաստանի համար ընդունելի երրորդ երկրի, կրկնում եմ՝ Հայաստանի և Ռուսաստանի համար ընդունելի երրորդ երկրի: Ընդ որում, բոլորիդ ուշադրությունն եմ հրավիրում այն փաստի վրա, որ այս հանգամանքներում ավելի է ակտիվացել Թուրքիայի տարածքում Կարս-Դիլիջու, այսինքն՝ Կարսից Նախիջևան երկաթուղու կառուցման ընթացքը: Հասկանալի է, որ մենք չենք կարող արգելել կամ արգելակել այդ երկաթուղու կառուցումը և պետք է առերեսվենք այն փաստի հետ, որ Երասխ-Ախուրիկ երկաթուղին պետք է մրցակցի Դիլիջու-Կարս երկաթուղու հետ, և սրա համար մենք պետք է հնարավորինս արագ Երասխ-Ախուրիկը բերենք մրցակցային լավ վիճակի և հետագայում էլ ապահովենք երկաթուղու կողմից ծառայությունների բարձր որակը և մրցունակ գինը:

Եվ ահա այս ամենի կարևորության գիտակցումն է, որ հանգեցրել է Կառավարության քննարկվող ծրագրի հետևյալ ձևակերպմանը, որը կարող եք գտնել ծրագրի չորրորդ բաժնում: Մեջբերում եմ. «Երկաթուղու հավատարմագրված կառավարման համակարգը վերանայվելու է այնպես, որ չխոչընդոտի Հայաստանի Հանրապետության միջազգային տրանսպորտային համակարգի ինտեգրման այն պատմական հնարավորության իրականացմանը, որը ստեղծվել է»: Մենք շարունակելու ենք աշխատանքն այս ուղղությամբ և Ռուսաստանի մեր գործընկերներին կրկին խնդրում եմ հնարավորինս արագ հասնել այս խնդրի բարեկամական լուծմանը:

Վերադառնալով TRIPP նախագծին՝ ընդգծեմ, որ այն ներառելու է ոչ միայն երկաթուղին, այլև խողովակաշարեր, ճանապարհներ, մալուխներ, էլեկտրահաղորդող պառասջարկը ստիպում է ավելի սեռ ուշադրություն դարձնել տարածաշրջանից էլեկտրական էներգիայի արտահանման նախագծերին:

Ներկայումս TRIPP նախագծի վերաբերյալ Հայաստանի և ԱՄՆ-ի միջև ռազմավարական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիրը գտնվում է վավերացման փուլում: Ավարտական փուլում են TRIPP Development Company ընկերության հիմնադրման աշխատանքները: Հիշեցնեմ՝ Հայաստանն այդ ընկերությունում ունենալու է 26%, իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ 74% բաժնեմաս: Այս բանաձևը գործելու է առնվազն 49 տարի, իսկ այդ ժամկետի ավարտից հետո կողմերի փոխադարձ համաձայնությամբ երկարաձգվելու դեպքում՝ ևս 50 տարի, իսկ այս դեպքում արդեն Հայաստանի մասնաբաժինը կդառնա 49%, իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգների մասնաբաժինը 51%՝ առանց Հայաստանի կողմից հավելյալ ֆինանսական կամ այլ ներդրման:

Նախագիծը, ինչպես ասացի, իրագործվելու է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, իրավազորության շրջանակներում: Եվ հատուկ ուզում եմ ընդգծել, որ TRIPP-ն օտարերկրյա որևէ ռազմական և/կամ զինված ներկայություն չի ենթադրում: Ընդգծեմ նաև, որ TRIPP-ից առաջ նախկինում մենք երբեք մեր առջև 100 տարվա նախագիծ կամ հեռանկար չենք ունեցել: Սա շատ կարևոր հանգամանք է: Երբեք մենք չենք ունեցել ծրագիր, նախագիծ, որը մեր առջև 100 տարվա հեռանկար է բացում, այն էլ աշխարհի թիվ մեկ գերտերության հետ: Եվ սա թե՛ Հայաստանի, թե՛ տարածաշրջանի համար պատմական հնարավորություն է: TRIPP նախագծի իրագործումը փոխելու է իրադրությունը և մթնոլորտը մեր տարածաշրջանում՝ խաղաղությունը տարածաշրջանային երկրների համար դարձնելով շահավետ ոչ միայն բառի սոցիալ-հոգեբանական ու քաղաքական, այլև ֆինանսական ու տնտեսական իմաստով: Սա ժամանակակից անկայուն աշխարհում կայունության ու խաղաղության շատ էական երաշխիք է, և մեր ժամանակներում ավելի հուսալի երաշխիք դժվար է պատկերացնել:

(1,1) -3- № 662 (12).indd 8/25/2026 7:54:17 PM

Սյունիքի մարզի դատախազությունը կրկին 1-ին հորիզոնականում է. 2026 թ. 1-ին կիսամյակի արդյունքները

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի գլխավորությամբ 2026 թվականի օգոստոսի 21-ին տեղի է ունեցել Դատախազության կոլեգիայի նիստ, որի ընթացքում ամփոփվել են Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազությունների, ինչպես նաև կայազորների զինվորական դատախազությունների 2026 թվականի 1-ին կիսամյակի աշխատանքները:

Մասիս Պողոսյանի ղեկավարությամբ Սյունիքի մարզի դատախազությունը կրկին առաջին հորիզոնականում է:

Ինչպես 2025 թվականի տարեկան աշխատանքների ամփոփման ժամանակ, Սյունիքի մարզի դատախազությունը կրկին զբաղեցրել է առաջին տեղը, իսկ 2-րդ և 3-րդ տեղերը հավասար ցուցանիշներով կիսել են Լոռու և Արարատի մարզի դատախազությունները:

Կայազորների զինվորական դատախազությունների պարագայում 1-ին տեղը զբաղեցրել է Տավուշի կայազորի զինվորական դատախազությունը, 2-րդը՝ Գեղարքունիքի կայազորի զինվորական դատախազությունը, 3-րդը՝ Սիսիանի կայազորի զինվորական դատախազությունը:

Հիշեցնենք, որ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով սահմանված աշխատանքի գնահատման չափանիշները, ի թիվս այլնի, ներառում են՝

1. Պետական և համայնքային շահերի պաշտպանության հայցերով պետությանը և համայնքին վերջնական դատական ակտով վերադարձված գումարի չափը,
2. Քրեական վարույթներով, ինչպես նաև դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ պետությանը, համայնքին, պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման գումարի չափը,
3. Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով մեղադրական եզրակացությամբ դատարան հանձնված քրեական վարույթների թիվը,
4. Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով վերջնական դատական ակտերի թիվը:

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Իրանը դեմ է TRIPP-ին...

Սկիզբը՝ էջ 1

լավ կլիներ, եթե հայ սահմանապահները ինքնուրույն վերահսկեին իրանա-հայկական սահմանը և դրանով անցնող երթուղիները»:

Այս մեկնաբանության վերաբերյալ զրույց է տեղի ունեցել իրանցի քաղաքագետ Փույա Հոսսեյնիի հետ: Նա ասաց, որ իրանական ՁԼՄ-ներում այդպիսի հայտարարության չի հանդիպել և չի գտել այդ հայտարարության աղբյուրը, սակայն Իրանի դիրքորոշումը մեկն է՝ Իրանը ունի կարմիր գծեր, այդ մասին միշտ հայտարարել է, ՀՀ տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը Իրանի կարմիր գծերն են, և Իրանը չի ընդունելու օտար, արտատարածքային ուժերի ներկայությունն այս տարածաշրջանում:

«Իրանի ազգային անվտանգության

սպառնալիքները, Իրանի տարածքային ամբողջականության դեմ, Հայաստանի տարածքային ամբողջականության դեմ վտանգների մասին միշտ զգուշացրել է, դրա ապացույցն են Միացյալ Նահանգների վերջին շրջանի ագրեսիաները:

(1,2) -3- № 662 (12).indd 8/25/2026 7:54:17 PM

Ադրբեջանցի ռազմական փորձագետը Սյունիքո՞ւմ է եղել

Ադրբեջանցի ռազմական փորձագետ և պահեստազորի զինվորական Ադալեթ Վերդիևը սոցիալական ցանցերում տեսանյութ է հրապարակել Սյունիքի՝ «Զանգեր» կոչվող տեղանքից՝ ներկայացնելով «Զանգեզուրի միջանցքի» վերաբերյալ ադրբեջանական պաշտոնական թեզերը:

Վերդիևը տեսանյութին կից գրել է, թե իբր Հայաստանի քաղաքացին «Զանգեզուրի միջանցքի» անցման տարածքից շնորհավորել է Ադրբեջանի ժողովրդին միջանցքի բացման առթիվ, իսկ այդ «շնորհավորանքը» դրական արձագանք է ստացել Հայաստանի հասարակության շրջանում: Նա նաև պնդել է, թե քաղաքացիները Հայաստանի իշխանություններին կոչ են անում հնարավորինս արագ ապահովել միջանցքի բացումը:

Սակայն այս պնդումների հիմքում որևէ անկախ հաստատված փաստ չի ներկայացվում:

Ավելին՝ հրապարակման բովանդակությունը, ինչպես նաև դրա շուրջ ադրբեջանական տեղեկատվական դաշտում ձևավորվող արձագանքները, հարց են առաջացնում՝ արդյո՞ք գործ ունենք ոչ թե Սյունիքում տեղի ունեցած իրական հանրային տրամադրությունների, այլ դրանք ներկայացնելու և մեկնաբանելու նպատակային փորձի հետ:

MediaHub-ի հետ զրույցում սյունեցի Էռնա Հարությունյանը ադրբեջանցի փորձագետի այցը դիտարկում է նաև ավելի լայն համատեքստում:

Նրա խոսքով՝ օրեր առաջ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հայտարարությունը, թե ադրբեջանցի մասնագետները Հայաստանի տարածքում ուսումնասիրություններ են իրականացրել TRIPP նախագծի շրջանակում, կարող է ունենալ նաև տեղեկատվական բաղադրիչ: **«Փաստորեն միայն մասնագետներ չէին եկել, այլ նաև մեծ լսարան ունեցող գործիչներ, որպեսզի ադրբեջանական թեզերը հրամցնեն նաև հայ հանրությանը»,**– նշում է մեղրեցի կինը: Նրա գնահատմամբ՝ հատկապես ուշագրավ է այն պնդումը, թե իբր տեղի բնակիչները դրական են վերաբերվում «միջանցքի» գաղափարին:

«Ադրբեջանցի փորձագետի հրապարակման մեկնաբանությունները հակառակ պատկերն են ցույց տալիս: Ինչ վերաբերվում է նրան, թե իբր սյունեցիները ողջունել են ադրբեջանցիներին, կարծում եմ՝ պարզից էլ պարզ է՝ մանիպուլյացիա է: Այդ հրապարակված տեսանյութի մեկնաբանությունները կարդում ես, մտածում՝ լավ, սրանց հետ ի՞նչ հարևանություն: Ինչքան վատ բառ գիտեն՝ գրում են, ու բոլորը հիմնականում նույն տեքստով ու բառապաշարով. «Մենք կվերադառնանք մեր հայրենիք», «Զանգեզուրը՝ Ադրբեջան է», «Մենք կհասնենք մինչև Երևան, տեր կկանգնենք մեր պապական հողերին»: Սրանց հետ ի՞նչ միջանցք»,– ասում է նա:

Այս ֆոնին ադրբեջանական հրապարակումը կարելի է դիտարկել ոչ միայն որպես հերթական քարոզչական նյութ, այլև որպես փորձ՝ «Զանգեզուրի միջանցքի» վերաբերյալ Բաքվի ձևակերպումները ներկայացնել որպես Հայաստանի հասարակության ներսում ընդունելի կամ նույնիսկ ցանկալի օրակարգ:

MEDIAHUB.AM

դրա ապացույցս ես Սրացյալ Նահանգների վերջին շրջանի պատերազմները: Իրանի բոլոր հարևանները նույն կերպ վստահեցնում էին, որ իրենց տարածքը թույլ չեն տա Իրանի դեմ օգտագործել, բայց փաստացի եթե տարածք են տրամադրում Միացյալ Նահանգներին, ԱՄՆ-ն առանց իրենց թույլտվության այդ տարածքներն օգտագործել է Իրանի դեմ: Մենք բախվել ենք նման երևույթների, դրա համար միշտ Իրանի կողմից զգուշացումը եղել է: Իհարկե, Հայաստանի կողմից պաշտոնապես Իրանին փոխանցել են, որ TRIPP նախագիծն ու Հայաստան- ԱՄՆ ռազմավարական հարաբերություններն Իրանի դեմ չեն, բայց փաստացի Իրանը բավարարված չէ այդ հարցում: Որովհետև եթե անգամ Հայաստանին էլ վստահի այդ հարցում, այդ համաձայնագիրն ունի երեք կողմ՝ մյուս երկու կողմերը՝ ԱՄՆ-ն և Ադրբեջանն են, որոնց Իրանը բացարձակ չի վստահում: Քանի անգամ Միացյալ Նահանգների հետ ուղիղ բանակցությունների մեջ է եղել Իրանը, վստահել է դիվանագիտական գործընթացին, որ արդյունք կլինի, բայց ամերիկյան կողմը հավատարիմ չի մնացել բանակցային գործընթացին և մեջքից հարվածել են Իրանին ու պատերազմ հայտարարել, իրենց ոչ մի խոստում չեն պահել, ոչ մի համաձայնություն չեն պահել: Իրանի հետ վերջին փոխըմբռնման հուշագիրը չեն պահել, դրա համար էլ Իրանը չի վստահում մյուս կողմերին, ինչքան էլ Հայաստանը վստահեցնի Իրանին, դա է խնդիրը»,-ասաց իրանցի քաղաքագետը:

Հոսսեյնին շեշտեց, Իրանը գոհ չէ այդ նախագծից, ու դա Իրանի ազգային անվտանգությանն է սպառնում, քանի որ խոսքը գնում է 49-99 տարվա պայմանագրի մասին: Եվ եթե անգամ հաշվի առնենք, վստահենք Հայաստանի խոսքերին, հայտնի չէ, թե մի քանի տարի հետո, 10 տարի հետո, 20 տարի հետո ինչ են անելու, այդ ճանապարհը ինչ է դառնալու, դա անհասկանալի է Իրանի համար բոլոր առումներով»,– եզրափակեց Փույա Հոսսեյնին:

(1,1) -4- № 662 (12).indd 8/25/2026 7:54:17 PM

Կապանը նշեց քաղաքի տոնը և հարգանքի տուրք մատուցեց համայնքի երախտավոր ավագներին

Հեռու ու մոտ վայրերից Կապան կանչող քաղաքի տոնն այս անգամ անցկացվեց օգոստոսի 15-ի շաբաթ օրը: Տոնակատարությունը սկսվեց ֆլեշմոբով և արդեն ավանդական դարձած հեծանվավազքով՝ Նորապսակների այգու հարակից տարածքից: Համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանն անձամբ մրցանակները հանձնեց պատանի հեծանվորդներին:

Այնուհետև հանդիսության մասնակիցները շարժվեցին դեպի Դավիթ Բեկի հուշահամալիր, որտեղ տեղի ունեցավ «Հալիձոր՝ հավատքի ամրոց» և «Հայաստան» հարթաքանդակների բացման արարողությունը: Հարթաքանդակների հեղինակը և համահեղինակը Անդրեաս Օհանջանյանն է, իսկ քանդակագործը՝ Էդգար Ստեփանյանը: Մշակութային նախագծի իրականացմանն օժանդակել են նաև Կապան համայնքի ղեկավարին կից ճարտարապետության, քաղաքաշինության և մշակույթի խորհրդակցական մարմնի անդամները: Այդ երկու հարթաքանդակները ներդաշնակորեն լրացնում են Դավիթ Բեկի հուշահամալիրը՝ մեկ ամբողջության մեջ միավորելով մեր ժողովրդի հերոսական պայքարը, ազգային արժանապատվությունն ու քրիստոնեական հավատքը:

Հարթաքանդակների բացման առիթով խոսք ասաց Կապան համայնքի ղեկավարին կից գեղարվեստական խորհրդի նախագահ, «Կապանի թանգարանների միավորում» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Գևորգյանը, ով, մասնավորապես, նշեց՝ այդ հարթաքանդակները միշտ հիշեցնելու են

(1,2) -4- № 662 (12).indd 8/25/2026 7:54:17 PM

գյանը, ով, սովորական պես, նշեց՝ այդ հարթաքանդակները միշտ հիշեցնելու են կապանցիներին, որ իրենք իրավունք չունեն թուլանալու, որ պարտավոր են տեր կանգնել իրենց նախնիների արյամբ պահված հողին և կերտել հզոր ու անվտանգ ապագա:

Կապանցիների և քաղաքի հյուրերի հաջորդ հանգրվանը Բաղաբուրջի հուշահամալիրն էր, որտեղ հարգանքի տուրք մատուցվեց մերօրյա պատերազմների զոհերի հիշատակին: Ծաղիկներ խոնարհվեցին սպարապետ Վազգեն Սարգսյանի հուշարձանին:

Կապանի մշակույթի կենտրոնի նախասրահում ներկաները ծանոթացել են լուսանկարիչ, վավերագրող Նվեր Չելյայի «Ես...» խորագրով ցուցադրությանը, որտեղ ներկայացված էին Կապանի տեսարժան վայրերը, բնաշխարհն ու մարդկանց առօրյան պատկերող հետաքրքիր և ինքնատիպ կադրեր:

Օրվա տոնակատարության գլխավոր

իրադարձությունը մշակույթի կենտրոնում էր՝ օրվա խորհրդին պատշաճող հանդիսավոր նիստը, որն անցավ **«Կապանը մեծարում է իր երախտավորներին»** խորագրի ներքո:

Կապանցիներին շնորհավորեց Սյունյաց թեմի առաջնորդ, գերաշնորհ տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանը:

«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը ներկայացրեց տոնի առթիվ Գևորգ Փարսյանի նախաձեռնությամբ թերթի հրատարակված հատուկ համարը՝ «Կապանի երախտավոր ավագները, ովքեր մեզ հետ են» խորագրով: Պարբերականի խմբագրակազմի նվիրումի և հետևողական աշխատանքի շնորհիվ հանրությանն է ներկայացվել 59 կապանցի երախտավոր: Ներկայացվող յուրաքանչյուր կերպարի միջոցով ինչ-որ չափով լույս է սփռվում նաև համայնքային կյանքի տվյալ ոլորտի վրա, բացահայտում ուրիշ անձանց, որոնց մեծ մասը, ավաղ, մեզ հետ չէ: Ըստ ամենայնի՝ առանց վերապահումի կարելի է արձանագրել, որ համարն արտացոլում է Կապանի վերջին 50 տարվա պատկերը:

Բանախոսի խոսքին զուգընթաց՝ էկրանին սահում էին ամսագրի էջերի լուսանկարները:

Տոնի առթիվ բարեմաղթանքի խոսքով հանդես եկավ ՀԿԿ Ղափանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ռոլանդ Ղոնյանը (1980-1988 թթ.), հասարակական գործիչ Սուսաննա Մարտիրոսյանը, Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը:

Կապանի օրվա առիթով և համայնքի զարգացման տարբեր ոլորտներում նշանակալի ներդրում ունեցած անձինք՝ «Կապան համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Միհեր Ավետիսյանը, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի ղեկավար Անուշ Մեժլումյանը, Կապանի մշակույթի կենտրոնի ժողովրդական գործիքների նվագախմբի ղեկավար Վարդան Քոչարյանը, Կապանի մարմնամարզության մասնագիտացված մարզադպրոցի տնօրեն Թևան Գևորգյանը, Կապանի թիվ 9 ՆՈՒՀ-ի երաժշտության դասատու Նելլի Մարգարյանը՝ պարգևատրվեցին համայնքի ղեկավարի շնորհակալագրերով և պատվոգրերով: Նման խրախուսանքի արժանացան նաև կազմակերպություններ՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային և Կապանի լեռնահարստացման կոմբինատները, «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը, Կապան համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհուրդը:

Հանդիսավոր նիստի ավարտից

(1,1) -5- № 662 (12).indd 8/25/2026 7:54:18 PM

«Նավասարդ» հայ-իրանական մշակութային և խոհանոցային փառատոնը

Առաջին օրը՝ օգոստոսի 11-ը նշանավորվել է հանդիսավոր արարողություններով և բարձրաստիճան հյուրերի ընդունելությամբ:

Սիսիան համայնքի ղեկավար Հովսեփ Առաքելյանը դիմավորել է Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Խալիլ Շիրդոլամիին, Կապանում ԻԻՀ գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդինին, Գիլան նահանգի Լահիջան քաղաքի քաղաքապետ Ռեզա Չենոեռեին և մի շարք այլ պաշտոնատար

հայկական ավանդական աղուհացով, զուռնա-դհոլի հնչյուններով, ինչպես նաև ազգային երգ ու պարով, որից հետո տրվել է փառատոնի հանդիսավոր մեկնարկը:

Բացման արարողությանը ողջույնի խոսքով հանդես է եկել համայնքի ղեկավար Հովսեփ Առաքելյանը: Նա մեծ պատիվ է համարել Սյունիքի սրտում՝ պատմամշակութային հարուստ ժառանգությամբ և ինքնատիպ ավանդույթներով առանձնացող Սիսիանում, հերթական անգամ հյուրընկալել այս կարևոր իրադարձության մասնակիցներին:

Հովսեփ Առաքելյանն ոնոգծել է նաև,

(1,2) -5- № 662 (12).indd 8/25/2026 7:54:18 PM

Լաոիջան քաղաքի քաղաքապետ Դեզա Զենդեդելին և մի շարք այլ պաշտոնատար անձանց:

Սիսիանում հյուրերին դիմավորել են սակրցներով:

Հովսեփ Առաքելյանն ընդգծել է նաև, որ անցած հինգ տարվա ընթացքում «Նավասարդ» փառատոնը վերածվել է

Հայաստանի և Իրանի միջև մշակութային, զբոսաշրջային ու գաստրոնոմիական համագործակցության կարևոր ու կայացած հարթակի՝ մեկտեղելով երկու ժողովրդի ազգային խոհանոցն ու հարուստ մշակութային ժառանգությունը:

Օրվա կարևորագույն իրադարձություններից էր ԻԻՀ Գիլան նահանգի Լահիջան և Սիսիան քաղաքների միջև քույր քաղաքներ դառնալու վերաբերյալ հուշագրի ստորագրումը, ինչը նոր էջ է բացում երկու համայնքի միջև ապագա համագործակցության համար:

Պաշտոնական արարողակարգից հետո միջոցառումը շարունակվել է տոնական համերգային ծրագրով՝ ներկաներին պարգևելով անմոռանալի ակնթարթներ և ջերմ մթնոլորտ:

Իսկ փառատոնի հայկական և իրանական տաղավարներում մասնակիցներն ու հյուրերը հնարավորություն են ունեցել ծանոթանալու երկու երկրների ազգային խոհանոցի բազմազանությանը, համտեսելու ավանդական ուտեստները և ձեռք բերելու տեղական արտադրողների ներկայացրած արտադրանքները:

* * *

«Նավասարդ» հայ-իրանական փառատոնի երկրորդ օրը՝ օգոստոսի 12-ը, նույնպես անցել է ջերմ ու տոնական մթնոլորտում:

Օրվա համերգային ծրագրում հայկական և իրանական երաժշտական խմբերը ներկայացրել են ազգային երգեր ու պարեր: Երաժշտական կատարումներով է հանդես եկել նաև սիրված ու ճանաչված երգիչ Ֆորշը:

Երկրորդ օրն անընդմեջ փառատոնի այցելուները շրջել են տաղավարներով, որտեղ ներկայացված էին հայկական և իրանական ավանդական ուտեստներ, ձեռագործ աշխատանքներ ու ազգային մշակույթը ներկայացնող ցուցադրություններ:

Տաղավարներում տիրող աշխույժ մթնոլորտը, ազգային երաժշտությունն ու համային բազմազանությունը փառատոնի երկրորդ օրը ևս վերածել են մշակութային գեղեցիկ տոնի:

Հետո տպավորիչ համերգային ծրագրով և կատարողական պատշաճ մակարդակով հանդես եկավ Կապանի մշակույթի կենտրոնի էստրադային-սիմֆոնիկ նվագախումբը, դիրիժոր՝ Սամվել Հայրապետյան, գեղարվեստական ղեկավար՝ Աստղիկ Գրիգորյան: Հնչեցին մոտ ու հարազատ երգեր, էստրադային կատարումներ: Համերգային ծրագիրը եզրափակվեց Գառնիկ Խաչատրյանի «Իմ Կապան» երգով, որն, ըստ ամենայնի, Կապան քաղաքի օրհներգն է:

Տոնական հացկերույթից հետո միջոցառումների շարքը շարունակվեց քաղաքի «երկրորդ հարկում»՝ Շինարարների թաղամասում: Թիվ 4 շենքի առաջին հարկում բացվեց «Կապանի սոցիալական ծառայություն» ՀՈԱԿ-ի ժամանակավոր կացարանը: Կենտրոնի մուտքը երիզող ժապավենը կտրել են «Կապան» բարեգործական հիմնադրամի տնօրեն Անժելա Ալեքսանյանը, «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության ղեկավար Վարդուհի Դադունցը և «Կապանի սոցիալական աջակցության կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն Մայա Միրզոյանը:

Այնուհետև եզակի այս նախաձեռնությունն իրականացվել է համայնքի բյուջեի միջոցներով՝ մոտ 59 մլն ՀՀ դրամ ներդրմամբ, որից 29 մլն դրամը տրամադրել է «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպությունը, իսկ շուրջ 30 մլն դրամը՝ «Կապան» բարեգործական հիմնադրամը:

Կապան քաղաքի տոնի շրջանակում անցկացվեցին նաև մարզական միջոցառումներ, մասնավորապես, նարդու, շախմատի, շաշկու մրցումներ:

Քաղաքային մարզադաշտում տեղի ունեցավ Կապանի ֆուտբոլի առաջնության եզրափակիչը Շահումյան փողոցի և Շինարարների թաղամասի «Չերեմուշկա» թիմերի միջև: Վերջինիս հաջողվեց մրցակցի դարպասը երկու գնդակ անցկացնել և հռչակվել քաղաքի չեմպիոն: Երրորդ պատվավոր տեղը գրավեց «Խուստուփ» թիմը: Հաղթողն ու մրցանակակիրները պարգևատրվեցին մեդալներով և դրամական պարգևներով՝ հաղթող թիմը՝ 600 հազար դրամ, երկրորդ տեղը՝ 300 հազար դրամ, երրորդ տեղը՝ 150 հազար դրամ:

Ժամը 18-ից հետո կատարյալ աշխուժություն էր մշակույթի կենտրոնի առջևի հրապարակում: Կազմակերպվել էր անհատ-ձեռներեցների աշխատանքների ցուցահանդես-վաճառք: Քաղաքի բնակիչներն ու հյուրերը շրջում էին տաղավարներով, ուսումնասիրում ներկայացված տեսականին և գնումներ կատարում: Տոնական միջոցառումներից անմասն չեն մնացել մանուկները, որոնց համար կազմակերպվել էր կրկեսային շոու ծրագիր: Տոնական մթնոլորտը լրացնում էին «Ղափան» բենդի կատարումները:

Կապան քաղաքի օրվան նվիրված միջոցառումները եզրափակվել են Գարեգին Նժդեհի հրապարակում՝ տոնական գալա համերգով: Բեմում էին Գրիշա Աղախանյանը, Անդրեն, Սրբուկը, D'Litte-ն և DJ Sianna-ն:

Ձևավորված ավանդույթի համաձայն՝ անցկացվել է խաղարկություն. դեպի Եգիպտոս խաղարկվող ուղևորության ուղեգրի տերը դարձավ Նոնա Պետրոսյանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

(1,1) -6- № 662 (12).indd 8/25/2026 7:54:18 PM

«Գորիսի օրը» ավանդական տոնը, որ մեկտեղվեց «Ֆեստիվառ» երաժշտական-զբոսաշրջային փառատոնի հետ

Օգոստոսի 15-ին Գորիսում տոնակատարություն էր. անցկացվում էր «Գորիսի

1970-ականներից կազմակերպվող տոնը՝ տարբեր անվանումներով ու դրսևորումներով, ամեն տարի ունենում է յուրօրինակ բովանդակություն:

համույթը, «Լիլի Նարինյան» պարային ստուդիան, Ա. Սաթյանի անվան երաժշտական դպրոցի դիոլահարների խումբը, Վազգեն Սարգսյանի անվան թիվ

հյուրերի համար կազմակերպվել էին նաև անվճար երթուղիներ դեպի Գորիսի տարածաշրջանի տեսարժան վայրեր:

Երեկոյան Գորիսում կայացավ

(1,2) -6- № 662 (12).indd 8/25/2026 7:54:18 PM

անցկացվում էր «Գորիսի օրը» ավանդական միջոցառումը:

դրսևորումներով, ասես տարի ուսեսուս է յուրօրինակ բովանդակություն:

Այս անգամ տոնը մեկնարկեց Չոփչունց ձոր կոչվող թաղամասից...

Թաղամասի վերակառուցված փողոցը կոչվեց Իրանի Իսլամական Հանրապետության Նային քաղաքի անունով՝ դառնալով երկու ժողովրդի բազմադարյա բարեկամության ևս մեկ արտահայտություն:

Փողոցի անվանակոչմանը մասնակցում էին նաև Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Խալիլ Շիրոզլամին, Կապանում ԻԻՀ գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամին:

Օրվա ընթացքում իրականացվեցին բազմաբնույթ մարզամշակութային միջոցառումներ:

Հետաքրքիր ծրագրով հանդես եկան Գուսան Աշոտի անվան ժողգործիքների երաժշտակլաս դպրոցի դոլոնարսերի խումբը, Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1, ինչպես և թիվ 7 մանկապարտեզների սաները:

Տոնական միջոցառմանը մասնակցեցին նաև Գորիսի Շարլ Ազնավուրի անվան արվեստի դպրոցի, նաև Գորիսի մանկապատանեկան մարզադպրոցի սաները:

Տոնական օրը Գորիսը հյուրընկալել էր հարյուրավոր զբոսաշրջիկների և հյուրերի:

Իսկ գորիսեցին, իրեն հատուկ հյուրասիրությամբ, պատրաստել էր ավանդական ուտեստներով սեղաններ՝ ստեղծելով շփման յուրահատուկ և ջերմ մթնոլորտ:

«Գորիսի օրը» միջոցառմանն իրենց ներկայությամբ պատվեցին նաև Ֆրանսիայի Վիեն քաղաքի ներկայացուցիչները:

Տոնական միջոցառման շրջանակում տարաժաշրջասր տեսարժաս վայրեր:

Երեկոյան Գորիսում կայացավ «Ֆեստիվառ» երաժշտական-զբոսաշրջային փառատոնը, որի ծրագրում ներառված էին համերգային ու ժամանցային միջոռացումներ:

Գրիգոր Տաթևացու անվան հրապարակում կազմակերպված «Ֆեստիվառ»-ի գորիսյան երեկոն եզրափակվեց երգչուհի Տաթև Ասատրյանի մենահամերգով:

«Գորիսի օրը» հերթական տոնակատարությունը համընկել էր Գորիսին քաղաքի կարգավիճակ շնորհելու 156-րդ տարեդարձին:

Տոնակատարության հատկապես եզրափակիչ փուլին, առանց չափազանցության, մասնակցում էր ամբողջ Գորիսը:

(1,1) -7- № 662 (12).indd 8/25/2026 7:54:19 PM

Նշվեց Քաջարան քաղաքի օրը

Քաջարանին քաղաքի կարգավիճակ շնորհվեց 68 տարի առաջ: Հենց տարեդարձի օրը՝ օգոստոսի 22-ին, նշվեց որպես քաղաքի օր:

Ժամը 11-ին համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանը մշակույթի պալատի նախասրահում՝ տոնական սեղանի շուրջ, ընդունեց հանդիսության հյուրերին: Մի բաժակ շամպայնով շնորհավորեցին օրվա խորհրդի առիթով: Տոնին մասնակցելու էին եկել Քաջարանի քույր քաղաք Սեն Շամոնի պատվիրակությունը, Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոսարանի և Կապանում բացվելիք Ռուսաստանի Դաշնության հյուպատոսարանի առաջատար խմբի ներկայացուցիչներ, մարզի համայնքների ղեկավարներ, հյուրեր, տարբեր տարիքի և զբաղմունքի քաջարանցիներ: Նրանք այցելեցին մշակույթի պալատի ֆրանկոֆոն կենտրոն, որտեղ դասընթացների մասնակից երեխաները ֆրանսերենով ողջունեցին նրանց, երգեցին և արտասանեցին:

Կեսօրին տոնակատարության մասնակիցներն այցելեցին զոհված ազատամարտիկների հուշահամալիր, «Լավագունը՝ մանուկներին» կարգախոսը այս դեպքում համապատասխանում էր իր տրամաբանությանն ու իմաստին:

Ինչպես «Սյունյաց երկրին» հայտնեց հաստատության տնօրենը, մանկապարտեզը կարող է ընդունել մինչև 130 սան: Նրանց կրթության և դաստիարակության գործով զբաղվելու են 35 հոգի, ավելի ստույգ՝ այդքան է մանկապարտեզի աշխատակիցների թիվը: Կրթօջախը փոքրիկ քաջարանցիների առջև դռները կբացի գիտելիքի և դպրության օրը՝ սեպտեմբերի 1-ին:

Տոնակատարության մասնակիցների հաջորդ հանգրվանը դարձյալ Քաջարանի մշակույթի պալատն էր, որտեղ կայացավ օրվա խորհրդին պատշաճող հանդիսավոր

(1,2) -7- № 662 (12).indd 8/25/2026 7:54:19 PM

մասնակիցներս այցելեցրս զոհված ազատամարտիկների հուշահամալիր, հարգանքի տուրք մատուցեցին մերօրյա նահատակների հիշատակին:

Քաղաքի օրվա ամենանշանակալի իրադարձությունը Քաջարանի թիվ 1 հիմնանորոգված մսուր-մասնապարտեզի բացումն էր: Այս նախաձեռնությունն իրականացվել է 2024 թվականի սուբվենցիոն ծրագրի շրջանակում՝ կառավարության, համայնքի և «ՀՊՄԿ» ՓԲ ընկերության համաֆինանսավորմամբ: Ծրագրի ընդհանուր արժեքը 559 միլիոն 395 հազար դրամ է, որից 434 միլիոն 90 հազարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության, 112 միլիոնը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի, իսկ 13 միլիոն 300 հազար դրամը՝ Քաջարան համայնքի ներդրումն է: Շինարարական աշխատանքները բարձր որակով իրականացրել է «Աժդանակ» ՍՊ ընկերությունը:

Մսուր-մանկապարտեզի մուտքը երիզող կարմիր ժապավենը կտրելուց հետո ներկաները շրջեցին մսուր-մանկապարտեզի հարկաբաժիններով:

Ամեն ինչ ժամանակակից էր և աչք շոյող: Աշակույթի պալատս էր, որտեղ կայացավ օրվա խորհրդին պատշաճող հանդիսավոր նիստ: Այն սկսվեց Տերունական աղոթքով: Սյունյաց թեմի առաջնորդ, գերաշնորհ տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանը ճիշտ նկատեց, որ Քաջարանը 68 տարեկան չէ, կամ ասում են քաղաքի հիմնադրման 68-րդ տարեդարձը: Քաջարանի հիմնադրումը գալիս է դարերի խորքից: Վկան՝ այն սրբավայրերն են, որ գտնվում են տարածաշրջանում:

«Տասնվեց տարի առաջ դուք ունեիք մեկ եկեղեցի, այսօր՝ չորսը: Վստահ եմ՝ այդ եկեղեցիների օրհնությունը պիտի լինի յուրաքանչյուրիդ հետ: Աստված օրհնի ձեզ: Ձեզ և բոլորիս տոնը շնորհավոր լինի»,– այսպես ավարտեց խոսքը սրբազանը:

Քաջարանի տոնի առթիվ բարեմաղթանքներ հղեցին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Ռոման Խուդոլին, Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, Քաջարան համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանը: Եղան նաև պարգևատրումներ. համայնքի ղեկավարի շնորհակալագրին արժանացան Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բարեգործական հիմնադրամի տնօրեն Արմեն

Ստեփանյանը, Սեն Շամոն քաղաքի փոխքաղաքապետ Քեթրին Շապարը: Մի ստվար խումբ քաջարանցիներ արժանացան համայնքապետի պատվոգրերին և հուշանվերներին:

Տոնին ընդառաջ Քաջարանում անցկացվեց քաղաքի մինի ֆուտբոլի առաջնությունը՝ «Մանվել Փարամազյանի գավաթի» համար: Հաղթող ճանաչվեց Աբովյան փողոցի թիմը, որին էլ հանդիսավոր պայմաններում հանձնվեց առաջին տեղի համար սահմանված գավաթը:

Հանդիսավոր նիստի մասնակիցների համար համերգային ծրագրով հանդես եկավ համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի հովանավորությամբ հիմնադրված ժողովրդական նվագարանների անսամբլը (ղեկավար՝ Նաիրա Բալայան):

Քաղաքի օրվա շրջանակում անցկացվեցին մարզամշակութային այլ միջոցառումներ՝ շախմատի և շաշկու մրցումներ, կազմակերպվեցին քաղաքի շնորհալիների աշխատանքների ցուցահանդես և գաստրոցուցահանդես՝ հյուրասիրությամբ, քաղաքի փոքրիկ բնակիչները ականատեսը եղան կրկեսային շոու ծրագրի: Այնուհետև մշակույթի պալատում «Սուպեր Գրիգ» հումորային շոու ծրագիրն էր:

Իսկ երբ օրը երեկոյացավ, քաղաքային մարզադաշտում համերգային մեծ ծրագրով հանդես եկավ ՀՀ վաստակավոր արտիստ Արման Հովհաննիսյանը, ում բեմում ընկերակցում էր հայտնի երգիչ Զախ Հարութը (Հարութ Փամբուկչյան):

Կեսգիշերին մոտ Քաջարանի երկինքը երփներանգվեց տոնական հրավառության գույներով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

(1,1) -8- № 662 (12).indd 8/25/2026 7:54:20 PM

Սամվել Ալեքսանյանի ելույթը Կապանի օրվան նվիրված հանդիսավոր ցերեկույթում (15.08.2026 թ.)

Սե՛ծարգո պարոն Փարայան

Սյունյաց թեմի առաջնորդ, գերաշնորհ տեր Մակար եպիսկոպոս Հակոբյան

Հարգելի ներկաներ

Նախ ընդունեք մեր խմբագրակազմի, մեր պարբերականի հետևորդների սրտաբուխ շնորհավորանքը Կապանի օրվա կողքի, արարում՝ միմյանց լրացնելով, ձգտում՝ մեծ ժամանակի իրենց բաժին ժամանակի ընթացքում հետագիծ թողնել:

Այդքանով հանդերձ՝ յուրաքանչյուրի արած-դրածը հաճախ չենք էլ նկատում: Կամ ուշացած ենք նկատում ու գնահատում, որը, ըստ էության, ձևական է լինում ի վերջո և տվյալ անձնավորությանը ոչինչ չտվող:

Գայանե Բաղդասարյան, Շուշաննա Հարությունյան, Արմինե Մարգարյան և, իհարկե, Գրիգորի Սահակյան:

Երախտավորներից յուրաքանչյուրի դիմանկարը ստեղծելու համար անհրաժեշտ է եղել և՛ արխիվային նյութերի փնտրտուք, և՛ տվյալ անձանց հետ հանդիպումներ, և՛ ամեն մեկի վերաբերյալ հանրային կարծիքի

2022 թ. օգոստոսի 20-ին, ինչպես և Կապանի երաժշտական փառատոնը՝ չորս տարի շարունակվող, որը, հիրավի, միջազգային հնչեղություն է ձեռք բերել:

Կապանի մասին Մարի Առաքելյանի հրաշալի բանաստեղծություններն ենք ներկայացնում:

Հայոց մեծերից Ռաֆֆու, Ավետիք Իսահակյանի, Գարեգին Նժդեհի խոսքերն ենք ներկայացնում՝ Կապանի ու կապանցու մասին:

Հիշեցնում ենք գիտական տեսակետն առ այն, որ ժամանակին Կապանի տարածաշրջան է այցելել հայ նոր գրականության և մանկավարժության հիմնադիր, լուսավորիչ-դեմոկրատ Խաչատուր Աբովյանը:

Համարը եզրափակում ենք Հալիձորի բերդը՝ Հայոց գահերեց իշխան Դավիթ Բեկի գլխավոր ամրոցը և Սյունիքի իշխանության 1720-ականների կենտրոնը, ինչպես և Վահանավանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ներկայացնելով՝ այդկերպ հարգանքի տուրք մատուցելով մեր փառավոր նախնիների հիշատակին, ովքեր դարեր շարունակ աննվաճ են պահել հայոց Սյունիքը և իբրև ժառանգություն փոխանցել մեզ:

Մի խոսքով՝ այդպես ենք կարողացել ներկայացնել մեր արժանավոր ավագներին...

Տա Աստված, որ մեզանից հետո՝ երբևէ, ստեղծագործական ուրիշ խմբեր այս թեման ավելի ընդգրկուն, ավելի խորն ու նորովի ներկայացնեն ընթերցողին:

Օգտվելով պատեհ առիթից՝ կուզենայինք ընդգծել մեկ այլ հանգամանք նույնպես:

Իհարկե, նորություն ասած չեմ լինի,

սեր պարբերականի հետևորդների սրտաբուխ շնորհավորանքը Կապանի օրվա կապակցությամբ:

Մաղթանքս մեկն է՝ թող հարատևի Սյունյաց աշխարհի և նրա կենտրոն Կապանի՝ գալիքին միտված արգասավոր երթը:

Մեզ համար պատիվ է, որ վերջին տարիներին Կապանի համաքաղաքային տոնի առիթով՝ ամեն անգամ, կարողանում ենք հրատարակել «Սյունյաց երկրի» հատուկ համար՝ օրվա թեմային պատշաճող:

Նկատի ունեմ Զանգեզուրի ինքնապաշտպանության հերոս Պողոս Տեր-Դավթյանին, Սյունիքի կամ Բաղքի կամ Կապանի թագավորությանը, ինչպես և Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանին նվիրված համարները:

Այսօրվա տոնը նույնպես նշանավոր է այդ տեսակետից:

Տոնի գլխավոր դեմքերը կամ գլխավոր հերոսները Կապանի մեծահարգ երախտավորներն են՝ ավագ սերնդից, որոնցից յուրաքանչյուրին նաև մենք ենք ներկայացնում՝ բոլորին միասին նվիրելով թերթի հերթական հատուկ համարը:

Կապանի երախտավորներին պարբերականի հատուկ համար նվիրելու, յուրաքանչյուրին ըստ պատշաճի ներկայացնելու և գնահատելու նախաձեռնության հեղինակը, ինչպես նախորդ (նշված) դեպքերում, Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանն է:

Գաղափարը կամ միտումը հստակ էր՝ Կապանի ամենամեծ հարստությունը, որ բացարձակ արժեք է, նրա բնակիչներն են և հատկապես նրանք, ովքեր անձնվիրաբար մասնակցել են Կապանի զարգացմանը, ովքեր այսօր էլ մեր ընթացքի առաջնագծում են:

Եվ եթե Կապանը Հայաստան աշխարհի չքնաղագույն անկյուններից մեկն է, ապա շնորհիվ նաև նրանց, որոնց ներկայացնում ենք, որոնց՝ տոնական այս օրը, հարգանքի տուրք է մատուցում ամբողջ համայնքը:

Համարի գաղափարը ծնվել է մեկ այլ հանգամանքից կամ իրողությունից ևս:

Սովորաբար մարդիկ (առնվազն համայնքի կտրվածքով) ապրում են կողքից էության, ձևական է լիսուս ի վերջո և տվյալ անձնավորությանը ոչինչ չտվող:

Մինչդեռ յուրաքանչյուր արժանավորին գնահատելու, յուրաքանչյուրի կատարածն իմաստավորելու կարիք ունի հանրությունը:

Նման մոտեցումը և՛ մարդկային է ու բարոյական, և՛ դաստիարակչական՝ հաջորդող սերունդների համար, և՛, իհարկե, բնական ու տրամաբանական:

Իհարկե, ճիշտ չէր լինի ասել, թե համայնքում 70 և ավելի տարիք ունեցող երախտավորները միայն նրանք են, ում ներկայացնում ենք այսօր:

Նրանց թիվն իրականում ավելի շատ է, բայց թերթային ձևաչափը, եթե նույնիսկ ավելի ծավալուն դարձնեինք համարը, չէր կարող ներառել բոլորին:

Իսկ թե ինչպե՞ս կամ ի՞նչ սկզբունքով են շատերից ընտրվել միայն 62 երախտավոր՝ դա նույնպես գաղտնիք չէ:

Այդ հարցում ևս, խոստովանենք, պարոն Փարսյանը հավատարիմ է մնացել իր վերկուսակցական, վերանձնական գործելակերպին, իր քաղաքական ու մարդկային ճաշակին:

Ասել է թե՝ նախևառաջ առավել արժանավորներին...

Ասել է թե՝ բոլորս մենք ենք...

Ցավոք, համարի նախապատրաստման ընթացքում նախատեսված անձանցից երեքը հեռացան երկրային կյանքից և տեղ չգտան սույն թողարկման մեջ: Խոսքը Գրիշա (Յուրի) Հայրապետյանի, Ռոման Ստեփանյանի և ճանաչված պատմաբան Կլիմենտ Հարությունյանի մասին է, որոնց վերաբերյալ հիշատակի խոսք է ասվել պարբերականի հերթական համարներում:

Այդպես է լույս աշխարհ եկել «Սյունյաց երկրի» հերթական հատուկ համարը:

Պատշաճ եմ համարում անպայման նշել մեր ստեղծագործական թիմի անդամների անունները, ովքեր իրենց նվիրական աշխատանքով կարողացել են ծնունդ տալ նախադեպը չունեցող, հանրագիտարանային և սկզբնաղբյուրային նշանակության համարին՝ Վահրամ Օրբելյան, Մարի Նավասարդյան, Իզա Ասծատրյան, և տվյալ անձանց հետ հասդրպուսսեր, և ամեն մեկի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրում:

Դիմանկարը կամ դիմանկարի ուրվագիծը, իբրև լրագրային ժանր, ուրիշ կերպ չէր էլ կարող ստեղծվել:

Համարը, եթե հասցրել եք ծանոթանալ, կառուցվել է ըստ ոլորտների, իսկ ներկայացվող անձանց հերթականությունը՝ այբբենական կարգով:

Կառուցվածքային մի առանձնահատկություն ևս...

Երախտավորների մեծ մասի դիմանկարին ծանոթանալիս կտեսնեք, որ ներկայացվող կերպարի միջոցով ինչ-որ չափով լույս է սփռվում նաև համայնքային կյանքի տվյալ ոլորտի վրա, բացահայտում ուրիշ անձանց ևս, որոնց մի մասը, ավաղ, մեզ հետ չէ այլևս:

Այսինքն՝ եթե ընդհանրացնենք համարի ամբողջ բովանդակությունը, ապա կարելի է առանց վերապահումի արձանագրել՝ համարն արտացոլում է Կապանի վերջին 50 տարվա պատմության ուրվագիծը:

Մեկ ուրիշ խնդիր ենք նաև լուծել...

Ավագ սերնդի մեր համերկրացիներին ներկայացնելով՝ փորձել ենք՝ գոնե շատ համառոտ, ցույց տալ Կապան քաղաքի ընդհանրական պատկերը, որի այսօրվա դիմագծում ներդրում ունի օրվա հերոսներից յուրաքանչյուրը:

Ընտրել ենք մատուցման ոչ ստանդարտ ձևեր. Կապանը՝ գեղանկարներում, Կապանը՝ լուսանկարներում:

Լուսանկարային լուծումներով առանձնացրել ենք պատմական մի քանի դրվագ ևս, որոնք, առանց չափազանցության, դարակազմիկ նշանակություն ունեն՝ **Դավիթ Բեկի հուշարձանի բացումը 1978 թ. հոկտեմբերի 8-ին, Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու նավակատիքն ու օծումը 2001 թ. դեկտեմբերի 1-ին, Լեռնահայաստանի սպարապետ Գարեգին Նժդեհի հուշակոթողի բացումը 2001 թ. դեկտեմբերի 8-ին, Զանգեզուրի ինքնապաշտպանության լեգենդար հրամանատարներից մեկի՝ Պողոս Տեր-Դավթյանի հուշարձանի բացումը** ընդգծել սեկ այլ հասգասասք սույսպես:

Իհարկե, նորություն ասած չեմ լինի, եթե բարձրաձայնեմ՝ հոգևորն ու մշակույթը Սյունիքի և մասնավորապես Կապանի լինելիության առանցքային բաղադրիչն են եղել դարեր շարունակ, նաև այսօր:

Բայց հարկ է արձանագրել, որ հոգևոր-մշակութային կյանքը վերջին տարիներին, շնորհիվ Գևորգ Փարսյանի հետևողական գործունեության, մի նոր աստիճանի է բարձրացվել, ինչին ականատես ենք արվեստի և հոգևոր կյանքի բոլոր ոլորտներում:

Ապացույցներից մեկն էլ թերթային այն չորս համարն են, որոնց մասին նշեցի, որոնք լույս աշխարհ եկան համայնքապետի նախաձեռնությամբ, որոնցից յուրաքանչյուրն իսկապես հանրագիտարանային նշանակություն ունի:

Հաջորդ թողարկումը՝ այդ շարքում, նվիրված կլինի համայնքի տարածքում գտնվող քրիստոնեական սրբավայրերին:

Այսօր ներկայացվող համարն էլ, հավատացեք, տարիներ, տասնամյակներ շարունակ սկզբնաղբյուր կլինի բոլոր այն հետազոտողների համար, ովքեր կհետաքրքրվեն Կապանի նորագույն պատմությամբ, ում կհետաքրքրի ձեզանից յուրաքանչյուրի կյանքն ու գործունեությունը:

Հենց դա է տպագիր մամուլի կամ ավանդական մամուլի արժեքներից մեկը, որի պատշաճ գիտակցումը տեսնում ենք Կապան համայնքում:

Եվ, իբրև խոսքիս ամփոփում, կուզենայի վերստին արժևորել քաղաքի տոնն ամեն տարի կազմակերպելու բարի ավանդույթը, այն էլ՝ այսպիսի մակարդակով:

Բախտորոշ ժամանակներ ապրող Սյունիքում նման տոնակատարությունները լույսի և հույսի յուրօրինակ կանթեղ են, որի շողերի ներքո որոշակիորեն խամրում են մեր երկրամասի շուրջ հյուսվող խարդավանքներն ու անորոշությունները:

<u>Շնորհավոր տոնդ, Կապան</u>

<u>Շնորհակալություն:</u>

(1,1) -9- № 662 (12).indd 8/25/2026 7:54:20 PM

Սուրեն Վարդանյան. դիմանկարի ուրվագիծ

Ծննդյան 80-ամյակը հաճելի առիթ է՝ անդրադառնալու մի մարդու, պետական ու կուսակցական գործչի կերպարին, ում հետագիծը նկատելի է Գորիսի տարածաշրջանի վերջին հիսուն տարվա անցուդարձում, ում ներկայությունը տեսանելի է այսօրվա մեր ընթացքի մեջ, ով շարունակում է յուրօրինակ փայլ հաղորդել Սյունիքի՝ շատ թե քիչ պահպանված մտավորականության առաջապահ փաղանգին:

Խոսքը Սուրեն Բախշիի Վարդանյանի մասին է...

* * *

Ծնվել է 1946 թ. օգոստոսի 24-ին Գորիսի շրջանի Տանձատափ գյուղում: 1964 թ. ավարտել է Տաթևի միջնակարգ դպրոցը:

1964-69 թթ. սովորել է Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտում և ավարտելով՝ ստացել անասնաբույժի մասնագիտություն:

Բարձրագույն կրթություն ստանալուց հետո աշխատել է Բարձրավան գյուղում՝ անասնաբուժական տեղամասի վարիչ:

Այնուհետև՝ 1969-70 թթ., ծառայել է խորհրդային բանակում:

Զորացրվելուց հետո՝ 1971 թվականին, նշանակվել է կոմերիտմիության Գորիսի շրջկոմի հրահանգիչ, ապա՝ բաժնի վարիչ:

1974-91 թթ. աշխատել է կոմունիստական կուսակցության Գորիսի շրջկոմում՝ նախ՝ հրահանգիչ, ապա՝ քաղլուստան վարիչ, 1979 թվականից՝ կազմակերպական բաժնի վարիչ:

1982-ին ընտրվել է շրջկոմի քարտուղար, 1983-ին՝ 2-րդ, իսկ 1990 թվականին՝ 1-ին քարտուղար՝ պաշտոնավարելով մինչև 1991 թ. սեպտեմբեր, երբ լուծարվեցին կուսակցության շրջկոմները:

Աշխատանքին զուգահեռ՝ 1975 թվակա-

մաշտաբով) Գորիսն էր:

Սուրեն Վարդանյանն այդ ժամանակաշրջանում Գորիսը ղեկավարող թիմի առանցքային դեմքերից էր:

Պետական և կուսակցական գործչի նրա տեսակը նկատել էր նաև մեր նշանավոր բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը՝ իր «Ընտիր երկեր»-ի՝ Սուրեն Վարդանյանին նվիրած օրինակի ընծայագրում. **«Սիրելի Սուրեն, ես անկեղծորեն ուրախ եմ, որ քեզ նման մաքուր հայորդին տեղ ունի մեր կյանքը կառավարողների մեջ» (26.08.87 թ.):**

* * *

Սուրեն Վարդանյանը, ինչպես նշեցինք, առաջին մասնագիտությամբ անասնաբույժ է, երկրորդ մասնագիտությամբ՝ իրավաբան, բայց...

Ինքնակրթությունն ամբողջ կյանքում ուղեկցել և ուղեկցում է նրան: Ու տարիների եմ հանգել, քանի որ շրջանային «Զանգեզուր» թերթի խմբագիրն էի, դրանով պայմանավորված՝ իրադարձությունների կենտրոնում էի, և ամեն ինչ, կարելի է ասել, մեր աչքի առջև էր:

Իր պահվածքով Սուրեն Վարդանյանը ցույց էր տալիս, որ պատեհապաշտությունը մերժելի է, որ սեփական դեմքը կերպարանափոխելը՝ հանգամանքների բերումով, դատապարտելի է, որ ճամբարափոխությունը՝ անձնական շահերից ելնելով, անբարոյականություն է, որ...

Հետագա իրադարձություններն էլ հաստատեցին, որ նրա ընտրած ուղին ողջամիտ է և տրամաբանական. կոմկուսը լքած և ՀՀՇ շարքերում հանգրվանած մարդկանցից շատերը հետագայում տեղավորվեցին այլ ուժերի շուքի տակ, որոնք փոխարինեցին ՀՀՇ-ին: Ու այդպես՝ մինչև այսօր...

Այո, 1990 թվականի աշխարհափոխման օրերին որդեգրած իր պահվածքով մեր հոբելյարը քաղաքացիության, բարոյականության, մարդկայնության պարզ դաս էր տալիս երբեմնի գործընկերներին և կուսակցական ընկերներին:

Այդ դասը, թվում է, հիմա էլ արդիական է...

* * *

Սուրեն Վարդանյանը տարիների ընթացքում պատրաստել և հրատարակել է մի քանի գրքույկ:

Ուշադրության արժանի են հատկապես «Հինավուրց Տանձատափ» (1-ին հրատարակությունը՝ 2013 թ., 2-րդ հրատարակությունը՝ 2015 թ.), «Տոհմանուններ» (Գորիսի տարածաշրջան, 2015 թ.) գրքերը:

Վերստին ընթերցելով «Հինավուրց Տանձատափը»՝ համոզվում եմ՝ հեղինակն իր քարափների տարեգիրն ու երգիչն է:

Ականատես լինելով նրա ապրած կյանքին, համոզվում եմ՝ իր սքանչելի բնօրրանն ու բնաշխարհն ամբողջ կյանքում ոգեշնչման աղբյուր են եղել, ապրելու և ստեղծագործելու նախապայման:

Ավելին՝ տվյալ գրքով ինքը կապող օղակի դեր է ստանձնել ժամանակների միջև՝ իր նախնիների ժամանակի ու իր զավակների միջև:

Թեման, անշուշտ, գիտական մեծ արժեք ունի ազգագրության տեսանկյունից, բայց...

Մեր համոզմամբ՝ գրքույկը ծագումով գորիսեցիներին իրենց բնօրրանի հետ կապելու յուրօրինակ միջոց է: Դա սերունդների միջև կապ ստեղծելու և այդ կապը նորոգ պահելու միջոց է: Դա ապրողներիս համար նախնյաց հիշատակին, նրանց թողած ժառանգությանը հավատարիմ մնալուն նպաստող հնարք է:

Ի վերջո նաև այդպես են հայրենի տունը, արմատները դառնում կանչող-ձգող ափ:

Նաև այդպես է բարձրաձայնվում ու լսելի դարձվում տոհմի կանչը:

Նաև այդպես է լրացվում, առարկայանում Գորիսի տարածաշրջանի բնական, աշխարհագրական, տեղանքային, ժողովրդագրական պատկերը:

* * *

Բնապաշտությունը Սուրեն Վարդանյանի մարդկային հատկանիշներից է:

Ծանոթացեք թեկուզ և **«Մեր հրաշք բնաշխարհը»** հոդվածաշարին («Պատառիկներ անցյալից» գրքույկից) և կհամոզվեք՝ գործ ունենք իսկական բնապաշտի հետ:

«Անտառի համը» խոհագրությունն ասվածի ցայտուն արտահայտություններից է:

Նրա հրապարակումներում մշտական բնակություն են հաստատել իր փոքր հայրենիքի Կարմիր քարն ու Սպիտակ ջուրը, Սղնախի բարձունքը, Մեծ ձորն ու Հարսնաձորը, Օվենի անտառը, Գյազբել-Արամազդը...

Հայրենի բնաշխարհի մասին խոսելիս, սակայն, չի բավարարվում շրջակա միջավայրը, բնության հրաշքներն ու հուշարձանները ներկայացնելով, այլ (միաժամանակ) մատնանշում է խնդիրներ, բարձրաձայնում մտահոգություններ՝ դրանց պահպանման ուղղությամբ:

* * *

Սուրեն Վարդանյանն այն մարդկանցից է, ովքեր մեր հասարակության զգայուն նյարդերն են:

Այն քչերից է, որ չի կարողանում անտարբեր անցնել մեր պետությանն ու ժողովրդին պատած հոգսերի, հայ ժողովրդին ու մեր արժեհամակարգին սպառնացող

(1,2) -9- № 662 (12).indd 8/25/2026 7:54:20 PM

կուսակցության շրջկոմսերը:

Աշխատանքին զուգահեռ՝ 1975 թվականին, ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հեռակա բաժինը, որն ավարտել է 1980-ին:

1991-94 թթ. աշխատել է «Ագրոբանկի» Գորիսի մասնաճյուղում, ապա՝ «Թամամ» արտադրական կոոպերատիվում՝ իրավախորհրդատու:

1994 թ. նշանակվել է Գորիսի միջշրջանային դատախազի օգնական, 1999 թ. հունվարից՝ Սյունիքի մարզի դատախազի տեղակալ՝ համակարգելով դատախազության աշխատանքը Գորիսի տարածաշրջանում:

2007 թվականին անցել է կենսաթոշակի:

* * *

Մոտ երեք տասնամյակ Սուրեն Վարդանյանը կոմերիտական-կուսակցական աշխատանքի առաջնագծում էր:

Եվ, կարծեք, պետք է լիներ այդ ժամանակ իշխող կոմունիստական գաղափարախոսությամբ պարփակված-կաղապարված, կուսակցության դիրեկտիվներով ապրող ու առաջնորդվող անձնավորություն, սակայն...

Ինքը Հայաստանի կոմունիստական կուսակցության այն ճյուղի ներկայացուցիչներից էր, ովքեր, կոմունիստական գաղափարներ կրելուց առաջ՝ ազգային ոգու ու գաղափարների ջատագով էին: Այսինքն՝ իշխող քաղաքական ուժի հնարավորություններն առավելագույնս ծառայեցնում էին հայրենի երկրամասի զարգացմանը, մեր ազգային ոգու պահպանմանը, Գորիսի տարածաշրջանի հոգևոր-մշակութային հարուստ ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը:

Ասվածը հաստատող-հավաստող բազմաթիվ օրինակներ կարող ենք հիշել:

Ճշմարտությունը պահանջում է փաստել՝ Գորիսի շրջանի ղեկավարներ Արամ Հարությունյանի և հատկապես Ռոբերտ Ալեքսանյանի իշխանավարման տարիներին Գորիսում (արդեն իսկ) կյանքի էին կոչվում նախագծեր, որոնք ձևով ու բովանդակությամբ ոչ միշտ էին տեղավորվում կոմունիստական գաղափարախոսության կաղապարի մեջ:

Պատահական չէ, որ 1988-ին սկիզբ առած հայոց ազգային զարթոնքի բնօրրաներից մեկը (հանրապետության Ինքնակրթությունս ասբողջ կյանքս ուղեկցել և ուղեկցում է նրան: Ու տարիների ընթացքում դարձել է հայրենագիտության իսկական մասնագետ, հայրենի եզերքը մանրամասն ճանաչող այր, ում ծանոթ է Գորիսի տարածաշրջանի ամեն մի անկյուն:

Դարձել է նաև մշակութաբան՝ բառի իսկական իմաստով: Նրա հետ կարելի է օրերով զրուցել մշակութային ամենատարբեր հարցերի շուրջ՝ մանրանկարչությունից, հոգևոր երգերից ու շարականներից, սյունիքյան ժայռապատկերներից մինչև դասական երաժշտություն ու պոեզիա, մինչև գեղանկարչություն ու քանդակագործություն:

Հարազատացել է գրականագիտության հետ. քաջածանոթ է հատկապես Ակսել Բակունցի, Սերո Խանզադյանի, Գարեգին Սևունցի, Սուրեն Այվազյանի, Գուսան Աշոտի և, իհարկե, Սյունյաց աշխարհի միջնադարյան նշանավոր գրիչների ու ծաղկողների ժառանգությանը:

* * *

Սուրեն Վարդանյանի կենսագրության մեջ կա մի դրվագ, որ առաջին հայացքից դժվար ընկալելի է:

1990 թվականին, երբ հանրապետությունում փաստացի հաստատվել էր երկիշխանություն, երբ կոմունիստական կուսակցությունն այլևս միակ իշխող քաղաքական ուժը չէր, երբ կոմկուսի անդամները ցուցադրաբար հրաժարվում էին ժամանակին մեծ դժվարություններով ստացած կուսակցական տոմսից և փորձում իրենցից «համարձակ ու հայրենասեր», նաև «առաջադեմ» գործչի տեսիլք ուրվագծել, Սուրեն Վարդանյանը ստանձնեց արդեն իսկ փլվող կոմունիստական կուսակցության Գորիսի շրջկոմի 1-ին քարտուղարի դերը:

Անշուշտ, ինքն էլ կարող էր խորտակվող նավից փախչողների շարքում հայտնվել և լույս աշխարհ եկող նոր քաղաքական ուժի ապահով ուրթում հանգրվանել, քանզի ամենքից լավ ինքն էր տեսնում, թե ինչ է կատարվում հանրապետությունում: Բայց գործեց միանգամայն հակառակ կերպ...

Երբեք չեմ փորձել նրանից պատասխան կամ պարզաբանում ստանալ պատմական այդ օրերին իր իսկ որդեգրած գործելակերպի շարժառիթների վերաբերյալ:

Սակայն ինքս ինձ համար եզրակացության սախսրսերր ցասասակր ու իր զավակսերր միջև:

Շարադրանքում ինքը չի ձգտում կամ ջանում հուշ դարձած դեպքերն ու դեմքերը, իրադարձություններն ու ավանդույթները խմբագրել: Եվ այդ անկեղծությունն ու անմիջականությունն են, որ, ի վերջո, սրբագործում են մեր լեռնաշխարհի այդ անկյունը՝ Տանձատափը՝ իր մարդկանցով, բնաշխարհով, սովորույթներով:

Ներկայացված փաստերն ու նկարագրությունները, հուշն ու վերհուշը նոր արժեք են ձեռք բերում, երբ ողողվում են այն մեծ սիրով ու կարոտով, որ կա հեղինակի մեջ

Մանկության աչքերով դիտված, ճանաչված մարդիկ, հայրենի տունն ու ծննդավայրը գրքում դառնում են բնության մի մասը՝ իմաստավորված-համեմված դարերի խորքից եկող ավանդույթներով, բառ ու բանով:

Իսկ սկիզբը, այո, մանկությունն է, որ գրքում դառնում է երազ, կարոտ ու սեր.

«Թող այնպես լիներ, որ մանկանայի,
Գարունը բացվեր, մարգեր գնայի,
Մեր գառն ու ուլը այնտեղ տանեի,
Նրանց առաջին «գժական խաղը» ես վայելեի:
Նոր ծլարձակած թթվաշ քաղեի,
Մորս եփելիք թանովի համար դաղձ հավաքեի,
Ընկերներիս հետ թեք լանջերն ի վար գլոր գնայի,
Թփի մեջ հենց նոր աչիկը բացած զանգակ գտնեի,
Մանուշակի դեռ նոր տերև գցած մի ոստ տեսնեի,
Օրը չմթներ, այդպես գնայի՜, այդպես գնայի՜, քեզ հանդիպեի:
Ա՜խ, երանի թե ես մանկանայի»:

Ոչ պակաս ուշագրավ է «Տոհմանուններ» (Գորիսի տարածաշրջան) գրքույկը:

Հեղինակի (ինչպես և շատերիս) համար հայրենիքը սկիզբ է առնում իրենց գեղջկական տնից, որն այս դեպքում հուշի մեջ ապրող մանկության-պատանեկության աշխարհն է:

Բայց հայրենիքի ճանաչողության համար (մեր պարագայում) չափազանց կարևոր նախադրյալներ են երկրամասում ապրող տոհմերը կամ գերդաստանները:

Գրքույկում ներկայացվում է Գորիսի տարածաշրջանի 25 համայնքում հաշվվող 972 տոհմ:

ժողովրդիս պատաշ ոոգսերի, հայ ժողովրդիս ու մեր արժեհամակարգին սպառնացող վտանգների կողքով:

Քչերից է, որ հատկապես վերջին տարիներին մեր երկրում տեղ գտած և գտնող շատ-շատ արգահատելի երևույթների կողքով չի կարող անտարբեր անցնել:

«Պատառիկներ անցյալից» գրքում զետեղված լրագրային մի շարք հոդվածներ հենց այդ մասին են՝ «Աշխարհի բանը», «Երկրի ագրարային հատվածի խնդիրների մասին», «Դարեր գաղթել ենք, հիմի՞ էլ գաղթենք»...

Հոբելյարը տարիներ շարունակ (ու մինչև հիմա), ժամանակ առ ժամանակ, հանդես է եկել լրագրային հրապարակումներով՝ այդկերպ արտահայտելով սեփական դիրքորոշումը կամ վերաբերմունքը մեր ընթացքի տարբեր հարցերի հանդեպ:

Հոդվածների մի մասն էլ զուտ հայրենագիտական ուղղվածություն ունեն:

Լրագրային այլ հրապարակումներից էլ իմանում ենք այն ջերմ հարաբերությունների մասին, որ ունեցել է Սերո Խանզադյանի, Համո Սահյանի, Սուրեն Այվազյանի, Գուսան Աշոտի հետ:

* * *

Հարգելի պարոն Վարդանյան

Ընդունեք մեր շնորհավորանքը ծննդյանդ 80-ամյակի կապակցությամբ:

Ձեզ՝ նախևառաջ քաջառողջություն:

Հավատացեք՝ Ձեր ներկայությամբ ու գործունեությամբ այսօր շարունակում եք սպասված մնալ մեր լեռնաշխարհում:

Ուստի և՝ պինդ կացեք ու նոր ստեղծագործություններով, նոր գործերով շարունակեք մնալ ընդօրինակման արժանի՝ այդկերպ ավելի կենսունակ դարձնելով համոզմունքը, որ Սյունյաց աշխարհը (թեև այս պահին խոցված ու անդամահատված, թեև անարժանապատիվ ու անհայրենիք արարածներով մեր ընթացքը ձևախեղած) եղել, մնում է ու լինելու է հայոց պետության և պետականության ողնաշարը, հայոց արժանապատվության երբեք չխամրող խորհրդանիշն ու կրողը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

(1,1) -10- № 662 (12).indd 8/25/2026 7:54:20 PM

Սյունյաց աշխարհի արժանավոր դուստր Սուսաննա Գրիգորյանի հոբելյանն է

Հարգելի տիկին Սուսաննա

«Սյունյաց երկրի» խմբագրակազմը շնորհավորում է Ձեզ՝ ծննդյան 70-ամյակի կապակցությամբ:

Ձեր կյանքի և գործունեության մասին կարելի է երկար խոսել ու հպարտորեն խոսել, բայց... Ուզում ենք առանձնացնել Ձեր գիտական գործունեությունը, որն առնչվում է հայկազյան ազգի երկրորդ լուսավորիչ Գրիգոր Տաթևացուն, ինչը հիացմունք է պատճառում:

Ձեր ապրած կյանքով ու գիտական գործունեությամբ Դուք տեղ եք գտել այն հայագետների կողքին, ովքեր դարեր շարունակ զբաղվել են Գրիգոր Տաթևացու գիտական ժառանգության ուսումնասիրման, աշխարհաբար թարգմանության, հանրայնացման չափազանց պատասխանատու գործով:

Հատկապես ուշագրավ է «Գիրք հարցմանց»-ի աշխարհաբար թարգմանությունը, որը գրվել էր 1397-ին, հրատարակվել 1729-ին, իսկ 300 տարի անց վերահրատարակվել Ձեր ջանքերով:

Տեղյակ ենք՝ ներկայումս զբաղվում եք Գրիգոր Տաթևացու Քարոզգրքի (Ձմեռան հատոր, Ամառան հատոր) աշխարհաբար թարգմանությամբ, որը կլինի գիտական մեծ իրադարձություն մեզանում:

Դուք, հիրավի, Սյունյաց աշխարհի արժանավոր դուստրն եք, և մենք հպարտանում ենք Ձեր գործունեությամբ:

Ձեզ՝ քաջառողջություն և հաջողություն տաթևացիագիտության հետագա զարգացման գործում:

* * *

Սուսաննա Մակարի Գրիգորյան, ծնվել է 1956 թ. հուլիսի 21-ին Երևան քաղաքում, նախնիները Գորիսի շրջանի Հարժիս գյուղից են:

1963-1973 թթ. սովորել և ավարտել

անհրաժեշտ հմտություն, տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, աչքի է ընկել մասնագիտական վերլուծություններով և առաջարկներով:

Արժանացել է Հանրապետության նախագահի և Արդարադատության նախարարի շնորհակալագրերի:

Հեղինակ է տասնյակից ավելի մենագրությունների, մի քանի տասնյակ գիտական հոդվածների, մատենագիտական ցանկը՝ ստորև:

Ունի մեկ դուստր:

Գիտական ժառանգությունը. մատենագիտություն

Մենագրություններ

3. Ստուգաբանությունը Գրիգոր Տաթևացու երկերում, ՀՍՍՀ ասպիրանտների 3-րդ հանրապետական կոնֆերանսի նյութեր, Երևան, 1987:
4. Հականիշների գեղարվեստական արժեքը Գրիգոր Տաթևացու Ներբողյանում, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 6-րդ կոնֆերանսի նյութեր, Երևան 1988:
5. Գրիգոր Տաթևացին իբրև մանկավարժ, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, հ.3, Երևան, 1988:
6. Թևավոր խոսքերի գեղարվեստական և գիտական արժեքը Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մեջ, ՀՍՍՀ ասպիրանտների 3-րդ հանրապետական կոնֆերանսի նյութեր, Երևան, 1989:
7. Փոխաբերական խոսքը և առակները Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մեջ, Լրաբեր հասարակական գիտությունների, հ.10, Երևան, 1989:
8. Նոր բառերը Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մեջ, Մանկավարժ, հ.7, Երևան, 1990:
9. Գրիգոր Տաթևացու բառամեկնություններն իբրև պատմական բառարանագրության աղբյուր, Երկրորդ հայրենագիտական միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 1993, մաս 1:
10. Անտուան Մեյեի մի ստուգաբանության մասին, Միջազգային գիտաժողով նվիրված Ա. Մեյեի ծննդյան 130-ամյակին, Երևան, 1996:
11. Բառերի այլաբանական արժեքը հայ միջնադարյան դարձվածաբանական միավորներում, ակադեմիկոս Հովսեփ Օրբելու հիշատակին նվիրված, գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, 1997:
12. Հայերն իբրև քրիստոնեության ավանդապահ ժառանգորդ, «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 1998:
13. «Բնիկ թե փոխառյալ բառեր», Պատմա-Բանասիրական հանդես N 1, 1999:
14. 13-14-րդ դարերի հայերենի բնութագիրը ոստ տաթևյան մատենագիտների քարոզութեան Ձմեռան հատորի բայական դարձվածային միավորների իմաստաբանական քննություն, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի նյութեր, Ե., 2017:
26. Գրիգոր Տաթևացու Գիրք քարոզութեան Ձմեռան հատորի անվանական դարձվածային միավորների իմաստաբանական քննություն, Հայ լեզվաբանության XI միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2017:
27. Հոմանիշների ոճական կիրառությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան Ձմեռան հատոր»-ում, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի նյութեր, Ե. 2018:
28. Հականիշների ոճական կիրառությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան Ձմեռան հատոր»-ում, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի նյութեր, Ե. 2018:
29. Հականիշ բառերի ոճական կիրառությունները Գրիգոր Տաթևացու Գիրք քարոզության Ամառան հատորում, «Ջահուկյանական ընթերցումներ» ընթերցումներ գիտաժողովի նյութեր, Ե. 2020:
30. Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի» հատուկ անունների իմաստային քննություն, «Հայոց լեզվի պատմության հարցեր, պրակ IV, Ե. ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2021:
31. Բաբգէն եպս. Կիւլէսէրեանի «Իսլամը Հայ մատենագիտութեան մէջ» և Գրիգոր Տաթևացու «Ընդդէմ տաճկաց»-ը «Հանդէս ամսօրեայ» պարբերական, Վիեննա, 2021:
32. Legal concepts in Grigor Tatevatsi's «Book of questions», Language and Culture, N28, 2022.
33. Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի» իրավագիտական հասկացությունների իմաստային քննություն», «Ջահուկյանական ընթերցումներ» հայերենագիտական գիտաժողովի նյութեր, Ե., 2022:
34. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԻ ՇԱՐՔ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ «Ղարաբաղ-

(1,2) -10- № 662 (12).indd 8/25/2026 7:54:20 PM

ես:

1963-1973 թթ. սովորել և ավարտել է Երևան քաղաքի Լ. Արիսյանի անվան միջնակարգ դպրոցը:

1974-1979 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանում, ավարտել բանասիրական ֆակուլտետը՝ գերազանցության դիպլոմով՝ ստանալով բանասերի, հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում: Զուգահեռաբար՝ 1976-78թթ., սովորել ու ավարտել է նույն բուհի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետը՝ ստանալով արվեստագետի հասարակական մասնագիտություն:

1983-1988 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայցորդ:

1989 թվականից՝ նույն ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ավագ գիտաշխատող, գիտաշխատող:

1989 թվականին գիտական թեզ է պաշտպանել «Գրիգոր Տաթևացու լեզվագիտական հայացքները» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1996-1997 թթ. ՀՀ մաքսային վարչության ընդհանուր բաժնի պետն էր, ապա՝ կադրերի բաժնի պետ,

1997-1998 թթ. ՀՀ կառավարության աշխատակազմի, հրատարակչական բաժնի գլխավոր մասնագետն էր:

1998-2000 թթ. աշխատել է ՀՀ կառավարության աշխատակազմում՝ «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ փոխտնօրեն:

2000 թվականից մինչև 2022 թվականի մայիսը «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲ ընկերության տնօրենն էր:

2022 թվականի մայիսից 2023թ. հուլիսը Երևանի քաղաքապետի խորհրդականն էր:

2005 թվականին ավարտել է Երևանի «Դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտի» իրավագիտության ֆակուլտետը՝ ստանալով իրավագետի, դատական փորձագետի որակավորում:

Աշխատանքային և կառավարման տարիներին դրսևորել է աշխատանքի կազմակերպման ու ղեկավարման

Սատենագրություն

Մենագրություններ

1. Գրիգոր Տաթևացու լեզուագիտական հայեացքները, Հանդէս ամսօրյա, Վիեննա 1989, էջ 195-255
2. Բառերի բացատրութիւնը Երգ երգոցի միջնադարեան մեկնութիւններում և ձեռագիր բառարանները, Հանդէս ամսօրեայ, Վիենա, 1995:
3. Պատմական քերականության հարցեր (Գրիգոր Տաթևացի), Երևան, 2002
4. Գրիգոր Տաթևացի, Թևավոր խոսքեր և ասույթներ, Երևան, 2003
5. Գրիգոր Տաթևացի, Միջնադարյան առակներ և զրույցներ, Երևան, 2006
6. Գրիգոր Տաթևացի, Ներբողեան Հովհան Որոտնեցու, Երևան, 2007
7. Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության մեջ (Գրիգոր Տաթևացի), Երևան, 2009
8. Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց»-ի համաբարբառը (քառահատոր աշխատություն, 2011-2013թթ.
9. Բժշկագիտական հասկացություններ Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մեջ, Երևան, 2013
10. Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն, Երևան, 2014
11. «Грамматические вопросы в трудах Григора Татеваци», Երևան, 2016:
12. Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց»-ի աշխարհաբար թարգմանություն, Երևան 2020, Երուսաղեմ 2023 (վերահրատարակություն):
13. «Grigoryan Susanna Makar- Grigor Tatevatsi, (medical, grammatical and legal questions). Sayings. 1346-1409. Generis, PUBLISING, 2024».

Հոդվածներ

1. Պատկերավոր արտահայտությունները Գրիգոր Տաթեվացու երկերում, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 5-րդ կոնֆերանսի նյութեր, Երևան, 1986:
2. Գրիգոր Տաթևացին և լեզվագիտական մի քանի հարցեր, Պատմա-բանասիրական հանդես հ.4, Երևան, 1987:
14. 13-14-րդ դարերի հայերեսի բսութագրրը ըստ տաթևյան մատենագիրների երկերի նյութի, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի նյութեր, Երևան, 2000թ.
15. Գրաբարը միջին և հաջորդ դարերում, Էջմիածին հանդես Բ-Գ, 2004:
16. «Առակաց գրքի միջնադարյան մեկնությունները», Հայոց գրերի գյուտի 1600-ամյակի միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2005:
17. «Առակաւոր խօսքը» միջնադարյան մեկնություններում, Հայկական աստվածաշնչի գիտաժողովի նյութեր, Երևան, 2005:
18. Նոր բառերը Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի նյութեր, Ե. 2012:
19. Գրիգոր Տաթևացու Գիրք հարցմանցի բնագրային համաբարբառը և «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի համեմատությունը, գիտաժողովի զեկուցումներ, Սանկտ Պետերբուրգ 2012:
20. Նորաբանությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի նյութեր, Ե. 2012:
21. Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի կրոնական և ծիսական հասկացությունների բառակազմական կաղապարները» «Ջահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի նյութեր, Ե. 2015:
22. Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի բժշկագիտական հասկացությունների իմաստաբանական քննություն, Հայերե-նագիտական միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան 2015:
23. «Սիրտ» բառը գրաբարյան դարձվածային միավորներում, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի նյութեր, Ե. 2016:
24. Գրիգոր Տաթևացու բառավկայությունները Հր. Աճառյանի «Արմատական բառարան»-ում, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016:
25. Գրիգոր Տաթևացու Գիրք ԿԻՐԱՌԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՍԻՆՈՆԻՄԱՅԻ ՇԱՐՔ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիոյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2022:
35. Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության նորակազմ իրավական հասկացությունների քննություն, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտաժողովի նյութեր, Ե., 2023:
36. Գրիգոր Տաթևացու մի շարք նորակազմ բառերի իմաստային քննություն, «Լեզու և լեզվաբանություն» հանդես, 2 (29) Ե.2023:
37. MEANING MOVEMENTS OF LEGAL CONCEPTS (NARROWING, EXPANSION OR INDIVIDUAL APPLICATION) IN THE WORKS OF GRIGOR TATEVATSI Language and Culture. Sciantific Peer Reviewed Journal, N 28, Քութաիսի, 2023.
38. Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մի շարք իրավական հասկացությունները հայերենի բառարաններում, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե. 2023:
39. Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի» նորահայտ բառերի բառակազմական կաղապարները, «Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության հարցեր, պրակ Բ, ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, Ե. 2023:
40. Ծիսակարգային հիմնական հասկացությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» - ում, ««Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության հարցեր», պրակ Բ, ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, Ե. 2023:
41. SEMANTIC AND OPERATIONAL EXAMINATION OF A NUMBER OF TERM WORDS OF GRIGOR TATEVATSI («Գրիգոր Տաթևացու մի շարք տերմինային բառերի իմաստային և գործառնական ուսումնասիրություն»). «Language and Culture» IX INTERNATIONAL SCIENTIFIC CONFERENCE» նյութեր, Vol. 9, 2024, «Language and Culture».

(1,1) -11- № 662 (12).indd 8/25/2026 7:54:20 PM

Վրեժ Սարուխանյան. «Ես գտա մերօրյա Վախթանգ Անանյանին»

ՎՐԵԺ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
Գրող, հրապարակախոս, ժուռնալիստների միջազգային ֆեդերացիայի անդամ

Արարատի, Արագածի, Արա լեռան և Արտին սարի քառանկյան գրավիտացիայի ձգողական դաշտում է Սերժ Մանուկյանի ծննդավայր Ոսկեվազ գյուղը: Տիեզերական ուժերն ազդում են բնակավայրի երևույթների ու հատկապես ապրողների կենսաբանության վրա, պարզապես՝ կերտում են մարդուն սարի պես գագաթին ամպեր գերող, ուժեղ, ակտիվ և շնորհներով լեցուն: Այդ էներգետիկայում հր ապաբերի Խոյ բնօրդանի գենետիկ պետ, Հայկական ավիացիայի մամուլի ծառայության ղեկավար, ընտրվել է Բնական գիտությունների Եվրոպական ակադեմիայի իսկական անդամ, արժանացել է Բնության և հասարակության միջազգային ակադեմիայի պատվավոր դոկտորի կոչման, ԽՍՀՄ և Հայաստանի ժուռնալիստների միությունների, Լրագրողների միջազգային դաշնության անդամ, բազմակի մրցանակակիր ու մեդալակիր:

Բնավորությամբ չափազանց զուսպ է, ներհուն, հանրագիտարանային իմացությամբ, բարեվարքության և էթիկայի սահմանները հարգող, ծանրակշիռ խոսքի վարպետ, սեփական կարծիքը հիմնավորող, բայց ուրիշին չպարտադրող ժուռնալիստ, բնապաշտ և մարդապաշտ գրող... Սերժ Մանուկյանը յուրովի է մեկնաբանում Մարդու, Աստվածայինի և Տիեզերականի Նարեկյան ըմբռնումը՝ «Ես եմ համայնը,և ամենայնն է իմ մեջ»: Եվ մի՞թե ավելի հասկանալի բառերով հնարավոր է բացատրել Սերժ Մանուկյանի խոհը՝ «Ես տիեզերքի մասնիկն եմ, և տիեզերքն իմ մեջ կա: Յուրաքանչյուր չէ, այլ հայրենի բնաշխարհում անընդմեջ շրջելով՝ բնապաշտությամբ սերունդ դաստիարակելն է... Սերժ Մանուկյանի սիրտը ճմլվում է Շաղվարդի զմայլելի գրկում զարկված բադի համար. «...Միամիտ, խեղճ բադեր... Չթռան, դեռ գեղանի պարանոցները ուղղեցին մոտեցողներին: Երևի կարծեցին, թե հաց էին նետելու իրենց... Խաբկանք... Տեղաց քարե կարկուտ: Բադաքլորի գլուխը վերջին անգամ մետաղական կանաչ-կապույտ փայլերով շողշողաց և ջախջախված ու արնակոլոլ շրմփաց ջրի հայելու վրա... Կտուցը կախ՝ օդում շվարած պտույտներ էր անում վշտահար մարին, սրտակեղեք ձայներով ընկերոջը վերև կանչում...»: Մեղք գործելու, բնության ներդաշնակությունը խաթարելու զգացողության մասին Մանուկյանի այս պատկերը մտովի համադրեցի ճապոնական գրականության հայտնի թանկաներից մեկին՝ «Մարդիկ, քարկոծեք ինձ, ես հենց նոր բալենու ծաղկած ճյուղը կոտրեցի...»: Երկուսում էլ մեղքի զգացողությունն է: Եթե ճապոնական տարբերակում մեղք գործողը զղջում է, կամենում ապաշխարել և պատրաստ է պատիժը կրելու, ապա հայկական տարբերակում մեղավորը չի զգում մեղքը և չի զղջում արածի համար: Նրա փոխարեն մեղքի ցավը զգում է որսորդ գրող Սերժ Մանուկյանը և ապաշխարում: Համեմատությունը ցավով հիշեցնում է, որ մենք չափից ավելի դաժան ենք կենդանական և բուսական աշխարհի հանդեպ, անխնա ոչնչացնում ենք մեզ պահող ու կերակրող մայր բնությունը, ինչի զավակն ենք մենք... Բնապաշտ գրողը հիշեցնում է՝ մի մոռացեք, որ բադը, մրջյունը և հսկայամարմին փիղը հոգեվարքի նույն ցավն են ապրում... Իսկ մարդիկ այս քաոսային ժամանակներում, տարված ինտերնետ և արհեստական սրսուռ հողը տրորեցին-ճզմեցին մետաղյա բիրտ թրթուրների տակ, տարածքը վերածեցին ընդամենը պարզ բանջարանոցի ու խոտհարքի, տեղ-տեղ էլ՝ էրոզացված գորշ, ամուլ խոպանի...»: Մեղավորն ու մեղքը կան, ապաշխարողը չկա: Եվ Սերժ Մանուկյանը բազում մեղսագործների փոխարեն ակամա դառնում է մեծ ապաշխարող: Մեր մեղավորը չի զղջում ճապոնական տարբերակի նման՝ «Քարկոծեք ինձ, մարդիկ...»: Միայն հատ ու կենտ մեղանչողներն են զղջում, այն էլ՝ կեսբերան... Սա է բնապաշտ գրող Սերժ Մանուկյանի հոգու ցավը: Ինչու՞ է մարդ արարածն այսքան ապերախտ... Բնապաշտ գրողն այս տագնապն է բարձրաձայնում իր հրաշալի պատմվածքներով, հոդվածներով, ահազանգերով՝ փրկենք բնությունը, որ մենք էլ փրկվենք...



Հայոց բնաշխարհի

Հեղինակը հայոց որսորդության մերօրյա պատմիչն է: Հին և միջնադարյան պատմիչներով հիշեցնում է հայ և օտար արքաների որսորդական ավանդույթները, նրանք նույնիսկ անտառ-արգելոցներ էին հիմնում, կենդանական և բուսական աշխարհի տեսակների բազմազանությունը ապահովում: Արքայական որսի արարողությունները հատուկ ծիսակարգեր էին, նաև զինվորներին էին վարժեցնում, մերձեցնում մայր բնությանը... Սերժ Մանուկյանը որսորդական բազմաթիվ փաստերը սոսկ վերապատմող չէ, այլ ժողովրդական մտածողությամբ, համուհոտով և ականատեսի աչքով պատմող է, երբեմն բարբառային ու նաև գրաբար խոսքով կոլորիտ ստեղծող... Սա սոսկ ընթերցանության գիրք չէ, այլ դասագիրք հատկապես քաղաքային վանդակ հիշեցնող բնակարաններում բնություն չտեսած երեխաների համար: Այս գիրքը պետք է ուսումնական հաստատություններում դառնա օժանդակ ընթերցանության ձեռնարկ, հանդիպումների և քննարկումների թեմա՝ ինչպես ժամանակին Վախթանգ Անանյանի գրքերը: Կոմպյուտերի պոչը բռնած երեխաների մեծ մասը ձինն ու էշը, շունն ու գելը իրարից չեն ջոկում, հեռացել են բնությունից՝ դառնալով ինտերնետի գերին: Դպրոցներում բնասիրության դասեր պետք է անցկացնել՝ հատկապես դասագիրք ունենալով նաև Սերժ Մանուկյանի

(1,2) -11- № 662 (12).indd 8/25/2026 7:54:20 PM

շնորհներով լեցուն: Այդ էսերգետիկայուն իր պապերի Խոյ բնօրրանի գենետիկ սերմնահատիկն է ծիլ տվել Ոսկեվազյան հողում: Քիչ այն կողմ Մեսրոպ Մաշտոցի դարավոր տագնապներով անհանգիստ... հանգստարանն է, ուր Սերժ Մանուկյանը մտնում է իբրև սրբալույս տաճարի և դուրս գալիս ոգեղենության նոր լիցքերով: Սա նրա գենետիկ կենսագրությունն է, իսկ աշխատանքայինն ընդամենը դրա ածանցյալ շարունակությունն է: Այդպիսին է Աշտարակի Ոսկեվազի ոսկեմաս Սերժ Մանուկյանը՝ 80-ամյա ճշմարիտ հայորդին:

Հիշու՞մ եք Թումանյանի «Հառաչանք» պոեմի 80 տարեկան ծերունու խոսքը: Նա չի հիշեցնում, որ ինքը 80 տարեկան է, այլ ասում է՝ «...Էս է չորս քսան տարիս լրացավ...»: Ութսունն այնքան խոսուն չէ, որքան չորս քսանը, ախր ամեն քսանը մի վաստակած ութսունի կյանք է, տագնապ ու տառապանք, նաև՝ արժանապատվություն, երազանք... Սերժ Մանուկյանը Թումանյանական ժողովրդական մտածողության ու պատկերավորման այս տրամաբանության մեջ է: Միայն Սերժ Մանուկյանը կարող է իր ապրած 80-ը չորս 20-ի բաժանել ու գումարել, ինչը մարդիկ ճշմարիտ կենսագրություն են համարում:

Դե ուրեմն՝ խոսքը տանք նաև թվերին ու փաստերին:

Ծնվել է 1946-ին Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը, աշխատել Աշտարակի կուսշրջկոմում, շրջանային թերթում, եղել է Պրոֆտեխուսումնարանի տնօրեն, Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության Արագածոտնի մարզային ծառայության

Հայոց բաշխարհի բարեկամ, ոսկեբերան պատմիչ Սերժ Մանուկյանի ամեն պատմություն իր խրատականն ունի՝ սիրել և պահպանել մարդկության օրորոց բնությունը, սովորել նրանից...

բանական էակ այս ընկալումով կարող է բացել աշխարհաճանաչողության մեծ դռները...»: Իբրև հայտնություն՝ կարդում էի Սերժ Մանուկյանի հերթական «Որսորդի գրքի կրակոցներ» հանրագիտարանային ժողովածուն... Հիշեցի մեծ բնապաշտ Վախթանգ Անանյանի որսորդական պատմվածքները և բնաշխարհի հրաշալիքները... Եղավ հայտնությունը՝ Սերժ Մանուկյանը մեր օրերի Վախթանգ Անանյանն է... Չարմանալի չէ, գուցե նախախնամության ամենատես մատը խառն է, որ նրանք մտերիմներ էին... Որսորդությունը երկուսի համար էլ վայրի կենդանիների վրա որսամսի համար կրակելը բանականություն հրաշքներով, մոռանում են իսկական հրաշքը՝ բնաշխարհը... Սերժ Մանուկյան գրողի բարոյական խրատականը մարդկանց մեջ բնության և տիեզերական ներդաշնակության պահպանության զարթոնքն է, ամեն թիզ հող հայրենիք է, իսկ դրա խաթարումը՝ մեծագույն մեղք՝ «Երբ լսեցի, որ ամեհի բուլդոզերներով խոշտանգել են գինեվետ հովիտը, այլևս այն տեսնելու սիրտ չունեցա... Այո՛, անհեռատես, անհոգի կառավարիչների կամոքն արմատահան արվեցին տոհմիկ հայ այգեպանի պաշտամունք խաղողի դարավոր վազերը, բարիքների աղբյուր պետք է ասցկացսել՝ հատկապես դասագիրք ունենալով նաև Սերժ Մանուկյանի այս բացառիկ հանրագիտարանը: Պատկերացնում եմ, թե ինչ հրաշալի դասեր կանցկացնի հանրագիտարանային իմացությամբ տասնամյակների բնասեր որսորդն ու բնության գաղտնիքները բացող գրողը... Շահեկան ու դաստիարակիչ կլինի նաև եթերային տարբերակը: Հայոց բնաշխարհի բարեկամ, ոսկեբերան պատմիչ Սերժ Մանուկյանի ամեն պատմություն իր խրատականն ունի՝ սիրել և պահպանել մարդկության օրորոց բնությունը, սովորել նրանից... Գիրքն իմացության շտեմարան է՝ բնագիտություն, ազգագրություն, որսորդություն, հայրենագիտություն, գրականագիտություն, հուշագրություն... Գրողի առաջին օգնականը գրականագիտական աչք ու միտք ունեցող, ճանաչված վաստակաշատ բժշկուհի Գայանե Ղարիբյանն է, ում բժիշկ դառնալով՝ անշուշտ տուժել է գրականագիտությունը: Սերժ Մանուկյանի ապրած «չորս քսանը» առաջին հերթին բժշկուհի գրականագետի և զավակների ընտանեկան դեղատոմսով է...

Ես գտա մերօրյա Վախթանգ Անանյանին, մնում է, որ դուք էլ գտնեք ձեր սիրելի, «չորս 20» տարեկան, բայց տակավին եռանդուն գրողին...

***Հ.Գ.** «Սյունյաց երկրի» խմբագրակազմը շնորհավորում է մեր պարբերականի բարեկամ Սերժ Մանուկյանին՝ ծննդյան 80-ամյակի կապակցությամբ, մաղթում քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:*

42. Իրավական հասկացությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամառան հատորի «Նորին քարոզ վասն տասնաբանեան օրէնս» գլուխներում. «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2024:
43. Forum for linguistic studies (SCOPUS-յան համակարգում գրանցված) ամսագրում համահեղինակային մասնակցությամբ հրատարակվել է «INDO-EUROPEAN ORIGINS OF SYUNIK-ARTSAKH AGRICULTURAL TERMS» («Սյունիք-Արցախի գյուղատնտեսական տերմինների հնդեվրոպական ծագումը»): Vol.7(5), DOI: https://doi.org/10.30564/fls.v7i5.9112
44. Հին հայերենյան մի քանի բառերի իմաստափոխության մասին, «Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2025:
45. Григорян С.М., Особенности толкования Библии в «Книге вопрошений» Григора Татеваци, «Золотой V век армянской культуры: Золотой V век армянской культуры: Достижения. Мировое значение. միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մոսկվա, «Ключ-С» հրատ., 2025, էջ 298-303 (ռուսերեն): Doi: 10.56700/x6082-4230-2332-o
46. Meaning examination of Grigor Tatevatsi's newly words. International Journal of Language and Linguistics (IJLL).

(1,1) -12- № 662 (12).indd 8/25/2026 7:54:21 PM

Ժիրայր Աղավելյանի նոր գիրքը՝ «Կանթեղներ»

Արվեստագետ, գրող, ֆոտոռեժիսուրայի հիմնադիր, արմատներով վաչագանցի Ժիրայր Աղավելյանն ընթերցողի սեղանին է դրել իր վեցերորդ՝ «Կանթեղներ» գիրքը՝ հովանավորությամբ բելգիաբնակ Անահիտ Օհանյանի: Նրանում առանձնակի արժևորված են Սուրբ Թադևոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալները, Սուրբ Գրիգոր Նարեկացին, Խրիմյան Հայրիկը, Կոմիտասը, ովքեր պատմականորեն մեծ հետք են թողել հայոց հոգևոր կյանքի հաստատման ճանապարհին: Գրքի տիտղոսաթերթին Ջորջ Բայրոնի հայտնի ձևակերպումն է. **«Աստծո հետ խոսելու միակ լեզուն հայերենն է»:** Սա պատահական չէ ընտրված, քանզի «Կանթեղներում» զետեղված բանաստեղծություններն ըստ ամենայնի աղոթքներ են առ Աստված: Ընդ որում գեղարվեստական խոսքն ամբողջանում է Ժ. Աղավելյանի ինքնատիպ նկարներով:

Արդեն ավանդույթ է ձևավորված, որ օգոստոս ամսին Ժիրայր Աղավելյանն իր նոր գիրքը ներկայացնում է հայրենակիցներին: Նախանցյալ տարի «Մտորում են նկարները» գիրքն էր, անցյալ տարի՝ «Ստվերի լույսը»: «Կանթեղներ»-ի շնորհանդեսը տեղի ունեցավ օգոստոսի 21-ին «Կապանի գրադարանների միավորում» ՀՈԱԿ-ի էլեկտրոնային գրադարանում: Նախ ցուցադրվեց Ժիրայր Աղավելյանի նկարահանած «Աստղերի կանչով» տեսաֆիլմը, որ վկայում է նրա գեղագիտական ճաշակի մասին:

Ներածական խոսքով հանդես եկավ գրքի խմբագիր Մարիամ Մանուկյանը՝ նշելով «Կանթեղների» գեղարվեստական արժանիքները:

«Կանթեղների» վերաբերյալ կարծիքներ և դիտարկումներ հայտնեցին Նելլի Օրբելյանը, Համլետ Մարտիրոսյանը: Մասնավորապես, այն միտքը հայտնվեց, որ «Կանթեղները» նման չէ որևէ գրքի, և դա նրա ամենաբնութագրական արժանիքն է: Նաև նշվեց, որ հեղինակի չափածոն ծնունդ է առնում նրա գեղանկարչության խորքերից: Գրադարանի աշխատակիցները բանաստեղծություններ ասմունքեցին գրքից:

Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգևոր հովիվ տեր Խաչատուր քահանա Հայրապետյանը ևս իր խոսքում ընդգծեց այն միտքը, որ գիրքն ամբողջությամբ աղոթք է, որ ընթերցողին ցույց է տալիս ճշմարիտ ճանապարհը դեպի հոգու խորքը:

Վերջում Ժիրայր Աղավելյանը երախտագիտության խոսք ասաց, որը հակիրճ էր. **«Շնորհակալ եմ բոլորիցդ, որ այստեղ եք և ձեզ կրկին տեսնելու բարեբախտությունն ունեմ: Իմ արմատները միշտ կանչում են ինձ: Ուրախ եմ, որ այս հողի զավակն եմ»:**

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սիսիանը դիմավորել է աշխարհի կրկնակի չեմպիոն Ջանես Նազարյանին

Սիսիանի համայնքապետարանի նախաձեռնությամբ, ավանդական աղ ու հացով, զուռնա-դհոլի հնչյունների ներքո, երգ ու պարով, բազմաթիվ սիսիանցիներ դիմավորել են հերթական

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ մանկավարժի թափուր աշխատատեղերի համար՝ հետևյալ ծանրաբեռնվածությամբ.

1. «Բաց լեռնային աշխատանքներ» մասնագիտության դասախոս-2.5 դրույք
2. Ֆիզիկա» առարկայի դասախոս-1 դրույք
3. Մաթեմատիկա» առարկայի դասախոս-0.5 դրույք
4. Չափագիտություն, էլեկտրատեխնիկայի հիմունքներ, գծագրություն, ստանդարտացում և ունիֆիկացում մոդուլների դասախոս-0.75 դրույք
5. Ռուսաց լեզու» դասախոս - 0.5 դրույք

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

1. ռիմում (Ձև 1)

սերքո, երգ ու պարով, բազմաթիվ սիսիանցիներ դիմավորել են հերթական մարզական փայլուն հաղթանակով համայնքի պատիվը բարձր պահած մեր հայրենակից, աշխարհի կրկնակի չեմպիոն Ջանես Նազարյանին:

17-ամյա մարզիկը Բաքվում անցկացված հունահռոմեական ոճի ըմբշամարտի (մինչև 17 տարեկանների) աշխարհի առաջնությունում հանդես գալով 71 կգ քաշային կարգում՝ նվաճել է աշխարհի չեմպիոնի տիտղոսը՝ երկրորդ անգամ կանգնելով աշխարհի առաջնության պատվո հարթակին:

Ջանեսի համար այս հաղթանակը հերթական նշանակալի ձեռքբերումն է: Հիշեցնենք, որ 2026 թվականի մայիսին նա դարձել էր նաև Եվրոպայի չեմպիոն՝ եզրափակչում 4:0 հաշվով առավելության հասնելով վրացի ըմբիշի նկատմամբ: Ուշագրավ է, որ Եվրոպայի ամբողջ առաջնության ընթացքում Ջանեսն իր մրցակիցներին չէր զիջել և ոչ մի միավոր:

Ջերմորեն շնորհավորում ենք մեր տաղանդաշատ մարզիկին այս փառահեղ հաղթանակի կապակցությամբ՝ մաղթելով անսպառ էներգիա, անկոտրում կամք և նորանոր հաղթանակներ միջազգային ամենաբարձր հարթակներում:

ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
13.08.2026

Ավարտվեց Սյունիքի մարզի շախմատի տղամարդկանց 26-րդ առաջնությունը

Ավարտվեց Սյունիքի մարզի շախմատի տղամարդկանց 26-րդ առաջնությունը, որն անցկացվեց լարված ու հետաքրքիր մրցապայքարում:

7 խաղափուլերի արդյունքում 6 միավորով մարզի չեմպիոնի տիտղոսը նվաճեց Ալեն Գևորգյանը:

Մրցանակային տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ՝

1-ին տեղ՝ Ալեն Գևորգյան (Կապան) (6 միավոր)

2-րդ տեղ՝ Սուրեն Գեսյան (Սիսիան) (5.5 միավոր)

3-րդ տեղ՝ Վարդան Մովսիսյան (Սիսիան) (5.5 միավոր)

4-րդ տեղ՝ Արտյոմ Մանուկյան (Ագարակ) (5 միավոր)

5-րդ տեղ՝ Ալեն Ղահրամանյան (Կապան) (5 միավոր)

Հատուկ անվանակարգերի մրցանակակիրներն են՝

Լավագույն ուսուցիչ — Արմեն Վազգենյան (Սիսիան)

Լավագույն վետերան — Վաչագան Շեգունց (Գորիս)

Լավագույն աղջիկ — Աննա Գևորգյան (Սիսիան)

Լավագույն Մ-12 — Նարեկ Թադևոսյան (Սիսիան)

Լավագույն Մ-18 — Մանվել Մանուչարյան (Սիսիան)

Շնորհավորում ենք հաղթողին և մրցանակակիրներին՝ մաղթելով նորանոր հաջողություններ առաջիկա մրցաշարերում՝ մասնավորապես Հայաստանի շախմատի տարածաշրջանային առաջնությունում:

Մրցաշարի վերջնական արդյունքներին և ամբողջական աղյուսակին կարող եք տեղեկանալ Chess-Results համակարգում՝

https://s2.chess-results.com/tnr1468597.aspx?lan=1&art=1...

Սյունիքի մարզի շախմատի ֆեդերացիան շնորհակալություն է հայտնում Կապանի լեռնահարստացման կոմբինատ/ Kapan Mining and Processing Company-ին՝ Սյունիքի մարզի շախմատի ֆեդերացիային, ինչպես նաև մարզում իրականացվող շախմատային միջոցառումներին լիիրավ աջակցության համար:

07.08.2026

Յացնել

1. դիմում (ՁԼ 1)
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ՝ բնօրինակը և պատճենը)
3. անձնագիր (բնօրինակը և պատճենը)
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5. ինքնակենսագրություն (ՁԼ 4)
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափսի
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը)
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Վերոնշյալ թափուր տեղերի համար կարող են դիմել այն անձինք, ովքեր ունեն դասընթացի բնույթին համապատասխան բարձրագույն կրթության որակավորում: Նախապատվությունը կտրվի այն անձանց, ովքեր ունեն տվյալ մասնագիտական բնագավառի մանկավարժական փորձ: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-17:30՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026թ. սեպտեմբերի 11-ին «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում հասցեն՝ ք. Կապան, Գ. Արզումանյան 11ա:

1. «Բաց լեռնային աշխատանքներ» մասնագիտության դասախոս - 2.5 դրույք, ժամը՝ 15:00
2. «Ֆիզիկա» առարկայի դասախոս - 1 դրույք, ժամը՝ 14:00
3. «Մաթեմատիկա» առարկայի դասախոս - 0.5 դրույք, ժամը՝ 13:30
4. Չափագիտություն, էլեկտրատեխնիկայի հիմունքներ, գծագրություն, ստանդարտացում և ունիֆիկացում - 0.75 դրույք, ժամը՝ 14:30:
5. «Ռուսաց լեզու» - 0.5 դրույք, ժամը -15:30

Կոնտակտային տվյալներ՝ էլ.հասցե syunikcollege@rambler.ru, հեռախոս՝ 028553061, 077384872

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 26.08.2026թ.: